

## ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ՃՈՐՃ ՊՈՒՇԻ ԵՐԿԴԻՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Սեպտեմբեր 11»-էն ետք Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի Ամերիկայի արտաքին քաղաքականութեան հիմնաքարը դարձուց աշխարհով մէկ ժողովրդավարութեան տարածումը, յատկապէս ազատ եւ արդար ընտրութիւններու միջոցաւ:

Անցեալ շաբաթավերջին Ուաշինգթոնը հրաւիրուած էր Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւ, որ Սպիտակ Տունէն ներս արժանացաւ սպասուածէն աւելի ջերմ ընդունելութեան, անտեսելով անոր հակաժողովրդավարական ընթացքը իր երկրի ղեկավարման կարևոր հարցերուն:

Նախագահ Պուշի ողջունելով Ալիեւին, Ատրպէյճանը նկատած է «արդիական Իսլամերկիր մը, որ ի վիճակի է հասնելու իր ժողովուրդին, եւ որ կը հասկնայ ժողովրդավարութիւնը եւ իր ապագան»: Պուշի մի քանի անգամ շնորհակալութիւն յայտնած է իր հիւրին՝ Իրաքի մէջ ցուցաբերած օգնութեան եւ քաղաքական մատակարարման անկասկածելի արդիւնքները հարցով: Իլիամ Ալիեւ ֆազայնուած Պուշի այս խօսքերէն յայտնած է թէ, իր երկիրը կը բաժնէ «նոյն բարձր արժէքները», ինչ որ Ամերիկայինն է:

Ատրպէյճանի ղեկավարի հասցէին Պուշի կողմէ արտասանուած արտասովոր գնահատականներուն անդրդառնալով, Ամերիկեան մամուլը կը յիշեցնէ Պետական Գարտուղարութեան տարեկան տեղեկագիրը, ուր կը բնագոյնով Ատրպէյճանի վարչակարգը մարդկային իրաւանց մարզէն ներս արձանագրած թերացումներուն համար եւ բաւականաչափ խոցելի փութարկութեամբ Ալիեւի ընտրութիւնը որպէս նախագահ:

Պուշի նման վերաբերմունքը, Հայաստանի դրացի երկրի մը բռնատիրական վարչակարգի ղեկավարին նկատմամբ, ոչ միայն ծիծաղելի կը դարձնէ Ամերիկայի արտաքին քաղաքականութեան կարեւոր սկզբունքներէն մէկը, այլեւ կը մտահոգէ մեր երկրէն ներս ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան հետաժողովրդային եւ քաղաքական խաւերը:

Ամերիկայի ղեկավարի այս երկդիմի քաղաքականութիւնը միմիայն ֆազայն կը հանդիսանայ եւ նոր յոյսեր կը ներշնչէ Հայաստանի այսօրուայ վարչակարգին, որպէսզի շարունակէ իր ներկայի ընթացքը եւ պատրաստուի դարձեալ կեղծելու յառաջիկայ տարուայ խորհրդարանական ընտրութիւնները, առանց մտահոգուելու ամերիկացի պաշտօնեաներու կողմէ մերք ընդ մերք հնչող սպառնալիքներով:

Ս.Դ.Հ.Կ. ՄԱՍԻՍԻ ԴԻԻԱՆ

## ՀԱՐԻԻՐ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ ՓՈԽԱԴՐՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ՄԸ ՎԱՐ ԻՆԿԱԾ Է ՍՈՉԻ ՄՕՏ

Չորեքշաբթի, Մայիս 3ի առաւօտեան կանուխ ժամերուն (տեղական ժամանակով) Հայկական ճամբորդատար օդանաւ մը վար ինկած է աջն պահուն երբ կը պատրաստուէր վայրէջք կտրել Ռուսական Սոչի ծովեզերեայ քաղաքի օդակայանը:

Ռուսաստանեան իթար-թասս գործակալութեան հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, օդանաւէն մասեր հասած են ծովեզերք եւ կին զոհի մը դիակը դուրս հանուած է ծովէն:

Հայաստան «Արմաւիա» ընկերութեան պատկանող «Էրպաս A-320» տիպի օդանաւը 92 ճամբորդներով, որոնց մէջ 5 երեխաներ, կը թռչէր Երեւանէն Սոչի երբ կորսուած է օդակայանի ռատարներէն: Սոչիի փրկարար ջոկատները անձրեւներու տակ փորձած են հասնիլ օդանաւի ինկած վայրը՝ ողջ մնացողներ գտնելու յոյսով:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԲԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՅՈՒԹԻՒՄԻՆ ԿՐ ՅԱՅՏՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՇՈՒՐՋ

Միջազգային հեղինակաւոր իրաւապաշտպան «Ազատութեան Տուն» (Freedom House) կազմակերպութիւնը պատրաստած է տեղեկագիր մը ազատութիւններու եւ մարդկային իրաւանց առումով Հայաստանի մէջ տիրող կացութեան վերաբերեալ:



«Ազատութեան Տուն» կազմակերպութեան ներկայացուցիչները հանդիպում կ'ունենան Հայաստանի Խորհրդարանի նախագահին հետ

Մայիս 2-ին տեղեկագիրէն օրինակ մը յանձնուած է Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանին: «Ազատութեան Տուն» ոչ կառավարական կազմակերպութեան փոխտնօրէն Թոմաս Մելիա եւ Եւրոպական գրասենեակի ղեկավար Քրիստի Էվենսըն Խորհրդարանի նախագահին փոխանցած են իրենց մտահոգութիւնները Հայաստանի մէջ նկատուող երեւոյթներուն կապակցութեամբ, կարեւորելով ժողովրդավարութեան խորացումը, տնտեսական զարգացումներն ու ազատ ընտրութիւնները, խօսքի ազատութիւնը եւ տեղեկատուութեան հաւաստիութիւնը:

«Ազատութեան Տուն» կազմակերպութեան տեղեկագիրին մէջ որպէս ժողովրդավարութեան լուրջ

խոչընդոտ կը նկատուի Հայաստանի ընտրական գործընթացները. «Ժողովրդավարական ընտրութիւններ կազմակերպելու բարձրաստիճան պաշտօնեաներու փորձերու ճախողումը կը նպաստէր ընտրական գործընթացի շուրջ ստեղծուած հասարակութեան վստահութեան նուազման»:

«Ազատութեան Տուն»-ի Հայաստանի գծով զեկուցող Աննա Ուոքերի կարծիքով, թէեւ Սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ մարդու իրաւունքներու շարք մը հիմնական սկզբունքները, սակայն գործնական

Շաբ.ք էջ 4

## Հ.Բ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆՑ ՆԱԽՕՐԷԻՆ 200 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԲ

Կիրակի, Ապրիլ 30ին, Փաստիկայի Գարլթոն հիւրանոցի վիեննական սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.Ի 100-ամեակի հանդիսութեանց հետ աղերս ունեցող ծանօթացման եւ զնահատանքի ընթացքը մը: Շուրջ 150 հոգի հաշուող ընտրեալ հասարակութեան մէջ աչքի կը զարնէին Հ.Բ.Ը.Մ.Ի Շրջանային ղեկավարներ ու կառույցներու կարգ մը պատասխանատուները, ինչպէս նաեւ՝ տեղույս քաղաքական, բարեսիրական, քաղաքացեւորութեանց, միութիւններու եւ հայ մամուլի ներկայացուցիչներ ու բարերարներ: Հ.Բ.Ը.Մ.Ի ազգօգուտ առաքելութեան, իրագործումներու եւ յառաջիկայի ծրագրերներուն մասին խօսք առին թալին Պէքալար, Ալլաեռ Պոլյաճեան, Սէսիլ Քէշիշեան, Վահէ Իմաստունեան, Հեռմինէ Ճանուցեան, Ֆլորա

քական, բարեսիրական, քաղաքացեւորութեանց, միութիւններու եւ հայ մամուլի ներկայացուցիչներ ու բարերարներ: Հ.Բ.Ը.Մ.Ի ազգօգուտ առաքելութեան, իրագործումներու եւ յառաջիկայի ծրագրերներուն մասին խօսք առին թալին Պէքալար, Ալլաեռ Պոլյաճեան, Սէսիլ Քէշիշեան, Վահէ Իմաստունեան, Հեռմինէ Ճանուցեան, Ֆլորա

Շաբ.ք էջ 8

## ՅԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՎ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ՓԱՐԻՋ-ԱՆԳԱՐԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

Փարիզի եւ Անգարայի յարաբերութիւնները հինգ տարուայ հանդիսատէսէ կ'արձեւան լարուած են: Հայերու Յեղասպանութիւնը ճանչցած Ֆրանսայի խորհրդարանը ներկայիս կը մշակը ցեղասպանութեան հերքման համար պատիժ նախատեսող օրէնք:

Այս օրինագիծը դժգոհութեան փոթորիկ յառաջացուցած է Անգարայի մէջ: Մայիս 1-ին, Սոֆիայի մէջ թուրքիոյ Արտաքին գործոց նախարար Աբդուլա Գիւլի եւ ֆրանսացի իր գործընկեր Ֆիլիպ Դուսթ-Բլազի հետ հանդիպումէն ետք, թուրքիոյ ղեկավարութիւնը սկսած է վերատեսութեան ենթարկել Փարիզի նկատմամբ իր վերաբերմունքը եւ այս ուղղութեամբ սկսած է պատրաստուիլ ծրագիր մը, որ վարչապետ էրդողանի կողմէ վաւերացուելու էր գործադրութեան պիտի դուրի Մայիս 18-ին՝ Ֆրանսայի խորհրդարանէն ներս տեղի ունենալիք քուէարկութեան օրը:

Մինչ այդ թուրքիա աշխոյժ աշխատանք կը տանի ֆրանսական խորհրդարանի կողմէ օրէնքի ընդունումը արգելելու նպատակով:

Մշակուող օրէնքին համաձայն, Հայերու Յեղասպանութեան փաստը հերքողներուն կը սպառնայ 45

Շաբ.ք էջ 4

## ՔԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՅԱՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՆԵՐՍ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔ Կ'ԱՌԱՋԱՐԿՈՒԻ

Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի Դեմոկրատ մեծամասնութեան ղեկավար Տարիօ Ֆրոմըրը, պատրաստած է օրէնքի նախագիծ մը, որ օրէնագիր մարմինի հաւանութեան արժանանալու պարագային կ'ապահովէ հայերէն լեզուի ուսուցումը նահանգի պետական վարժարաններէն ներս:

Ֆրոմըր որ Խորհրդարանէն ներս կը ներկայացնէ Կլէնտէլի եւ Պըրպէյնքի հայաշատ շրջանները, իր պատրաստած օրինագիծով կ'առաջարկէ հայերէն լեզուի ուսուցիչներու պատրաստութիւն, որպէսզի անոնք որակաւորուելով Քալիֆորնիա նահանգէն ներս կարողանան հայերէն լեզուով դասաւանդելու իրաւունք ունենալ:

Տարիօ Ֆրոմըր պատճառաբանելով իր առաջարկութիւնը կը յայտնէ թէ, Կլէնտէլի եւ Լոս Անձեւըսի պետական դպրոցներէն ներս արձանագրուած են 12788 ուսանողներ, որոնց առաջին լեզուն հայերէնն է եւ անոնք կարիք ունին այդ լեզուով ուսանելու, մինչեւ անգլերէնի տիրապետելը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԻՆՉՊԵՍ ՉՊԱՐՏՈՒԵԼ 2007-ԻՆ

Կասկածից վեր է, որ ներքաղաքական դաշտում տեղի ունեցող բոլոր գործընթացները պետք է դիտարկել նախընտրական պայքարի շրջանակներում: Այո, նախընտրական պայքարը սկսուել է, եւ այն էլ՝ բաւականին բուռն: Դրա ամենավառ վկայութիւնն, իհարկէ, Արթուր Բաղդասարեանի՝ անսպասելիօրէն արտայայտուած պիտներական եռանդն էր, որով նա բաւականին անպատեհ սկսեց ձեւացնել, թէ պայքարում է կոտուպցիայի դէմ, ապա նոյնքան անպատեհ սկսեց ունենորաններ անել Արեւմուտքի առաջու չաչտարարել, թէ Հայաստանի ապագան ՆԱՏՕ-ն է:

Արթուր Բաղդասարեանի այս գործելակերպը միանգամայն հասկանալի է: Նա գլխի է ընկել, որ 2007թ. խորհրդարանական ընտրութիւններից յետոյ ՕԵԿ-ի մասնակցութիւնը կոալիցիային «նախատեսուած չէ», եւ 2007-ին խորհրդարանում ձեւաւորուելու է միանգամայն այլ մեծամասնութիւն, ուստի որոշել է «անհաշտ պայքար մղել» յատկապէս նրանց դէմ, ումից, իր կարծիքով, կարող է ձայներ խլել:

Իսկ ի՞նչ խորհրդարանական մեծամասնութիւն է «նախատեսուած» 2007-ին: Սա հասկանալու համար նախ պետք է հասկանանք, թէ ովքեր են քաղաքական դաշտի հիմնական խաղացողները: Դրանք են՝ Ռոբերտ Քոչարեանը (որի «ծանր հրետանին», անշուշտ, «Բարգաւաճ Հայաստանն» է), Հանրապետական կուսակցութիւնը (Սերժ Սարգսեանի հետ միասին, որն ըստ էութեան գնալու ուրիշ տեղ չունի) եւ վերջ՝ Դաշնակցութիւնն, իհարկէ, նոյնպէս խաղացող է եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններում կը ստանայ իր աւանդական 7-8 տոկոսը: Ընդդիմութիւնը, չնայած այսօրուայ անգործունեայ եւ շփոթուած վիճակին, նոյնպէս մի 10 տոկոս կը ստանայ: Եթէ նոյնիսկ ընտրակեղծարարները շատ ոգեւորուեն եւ այդ 10 տոկոսը նոյնպէս խլեն, միեւնոյն է՝ «քաղաքական որոշում» կ'ընդունուի նրանց բերել խորհրդարան (եւ բնականաբար, ընտրութիւնը կանգ կ'առնի ՀԺԿ-ի վրայ՝ որպէս ամենաանաչառ եւ ամենակառուցողական ուժի): Ամենայն հաւանականութեամբ, «Ժողպատգամաւորը» նոյնպէս ինչ-որ ֆորմատով կը յայտնուի խորհրդարանում (եւ ամենեւին էլ պարտադիր չէ, որ «Նիդ-Ապարանը» դրան մասնակցի): Ահա եւ ամբողջ պատկերը:

Փաստօրէն, հիմնական քաղաքական ուժերը երկուսն են: Այն տարբերութեամբ, որ «Բարգաւաճ Հայաստանը», կարելի է ասել, ամբողջութեամբ պատկանում է Ռոբերտ Քոչարեանին, բայց ՀՀԿ-ն Սերժին չի պատկանում: Աւելին՝ ՀՀԿ-ն միայնակ կարող է մասնակցել ընտրութիւններին, բայց Սերժը միայնակ չի կարող:

Նշանակուած է սա արդեօք, որ 2007-ին ոչ մի քաղաքական պայքար էլ տեղի չի ունենալու, եւ իշխանական ուժերն ընդամէնը փորձելու են իրար ձեռքից խլել իշխանական լծակները (այսինքն՝ պայքարելու են ընդամէնը նախարարական պորտֆելներ, փողի եւ տնտեսական ոլորտների համար): Աւելի պարզ ասած՝ Հայաստանի ապագայի տեսանկիւնից տարբերութիւն կա՞, թէ իշխանական որ ուժերը կը յայտնուեն ապագայ կոալիցիայի կազմում, թէ՞ ոչ մի տարբերութիւն էլ չկայ՝ ով էլ մեծամասնութիւն կազմի, վիճակը

նոյնն է մնալու, քանի դեռ երկրում իշխանափոխութիւն տեղի չի ունեցել:

Կարող ենք վստահաբար պնդել՝ տարբերութիւն, այնուամենայնիւ, կայ: Այսօրուայ կոալիցիան խիստ լրոգուած է, եւ կոալիցիայի անդամները զբաղուած են բացառապէս իրար կոկորդ կրծելով: ՕԵԿ-ը պարզապէս զբաղուած է քաղաքական դաշտի ոչնչացմամբ, որովհետեւ իշխանութեան մաս կազմելով՝ իր վրայ ընդդիմութեան ֆունկցիաներ է վերցրել եւ դրանով իսկ գիտակցաբար վարկաբեկում է ընդդիմադիր պայքարի գաղափարը, իսկ ՀՅԴ-ն զբաղուած է էլ աւելի վստանգաւոր գործով՝ նոյնը անում է արտաքին քաղաքականութեան ասպարէզում: Այսինքն, Քոչարեանի

**Թէ իշխանական ո՞ր ուժերը կը յայտնուեն ապագայ կոալիցիայի կազմում, ոչ մի տարբերութիւն էլ չկայ՝ ով էլ մեծամասնութիւն կազմի, վիճակը նոյնն է մնալու, քանի դեռ երկրում իշխանափոխութիւն տեղի չի ունեցել**

համար սա իդէալական վիճակ է: Բոլորը, իրեն հանգիստ թողած, պայքարում են միմեանց դէմ:

2007թ. ընտրութիւններից յետոյ երկրում ինչ-որ բան կը փոխուի միայն երկու դէպքում: Առաջին՝ եթէ ինչ-որ հրաշքով ընդդիմութիւնը յաղթի (այդ դէպքում փոփոխութիւնները դրական կը լինեն), եւ երկրորդ՝ եթէ յաղթեն եւ կոալիցիա կազմեն ծայրայեղական եւ ըստ էութեան անկանխատեսելի ուժերը՝ ՀՅԴ-ն, «Նիդ-Ապարանը», «Դաշինքը» եւ այլն (այս դէպքում փոփոխութիւնները կը լինեն բացասական): Երրորդ դէպքում՝ եթէ ընդդիմութիւնը չյաղթի, բայց ՀՅԴ-ն եւ միւս ծայրայեղական կամ պոպուլիստական ուժերը դուրս մղուեն կոալիցիայից, իրավիճակն ընդհանուր առմամբ կը մնայ նոյնը, բայց գոնէ քաղաքական դաշտում իրավիճակը կը յատկեցուի, եւ ընդդիմութիւնը վերջապէս դուրս կը գայ շփոթուած վիճակից: Այսինքն, գոնէ յոյս կ'առաջանայ, որ 2008-ին իշխանութիւններն ի վիճակի չեն լինի վերարտադրուել:

Պարզ ասած, սա նշանակում է հետեւեալը: 2007-ի խորհրդարանական ընտրութիւններում ընդդիմութեան յաղթանակի շանսերը փոքր են (յամենայն դէպս՝ այսօր իրավիճակն այդպիսին է): Բայց այդ ընտրութիւններում ընդդիմութիւնը կարող է գոնէ չպարտուել: Դրա համար ընդամէնը անհրաժեշտ է, որ նոր ձեւաւորուելիք կոալիցիայում կեղծ կամ «լայթ» ընդդիմադիրներ (ՀՅԴ, ՕԵԿ, «Դաշինք» եւ այլն) չլինեն: Իսկ սա արդէն միանգամայն լուծելի խնդիր է:

**ՀՐԱՅՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»**  
4-28-06

ՀԱՅԵԱՑՔ ԿՈՂՔԻՑ

Երկօրեայ այցով Հայաստանում գտնուող Լիտվայի նախագահ Վալդաս Ադամկուսը մեր պետական համալսարանում հանդիպում էր ուսանողների եւ դասախօսների հետ: Բայց հետաքրքիր էր ոչ միայն այն, թէ ինչ էր ասում Ադամկուսը համալսարանի ներսում, այլ նաեւ այն, թէ ինչ էր կատարում մայր բուհի պատերից դուրս:

Ադամկուսին ուղեկցող լիտվացի լրագրողները ազահաբար նկարահանում ու լուսանկարում էին մեզ համար բոլորովին սովորական դարձած պատկեր՝ համալսարանը շրջապատած էր ոստիկաններով: Ընդ որում, համալսարանի գլխաւոր մասնաշէնքը փակուած էր ընդհուպ մինչեւ Մելիք Ադամեան փողոց:

«Ես նման բան չեմ տեսել», - մեզ հետ զրոյցում խոստովանեց լիտվական «Տորիգիէս կուրիերէս» թերթի ֆոտոլրագրող Ռենայրաս Մալիտասը: Վերջինս համոզուած է, որ իր նախագահին Հայաստանում ոչինչ չի սպառնում: Լիտվայում եղե՞լ է դէպք, որ Ադամկուսին, ասենք, թատրոն այցելելիս այսպէս պահպանեն: «Ոչ, Լիտվայում երբեք այսպիսի բան չի լինում», - մեր հարցին ի պատասխան ասաց «Լիետովաս ժինաս» թերթի լրագրող Մարիոս Գիրշան: «Սա երեւի նորմալ է: Զէ՞ որ երբ Հայաստանի նախագահը այցելում է թատրոն կամ ցուցահանդէս, երեւի նրան նոյնպէս չեն ուղեկցում այսքան թիկնապահներ»:

**ՏՕՆ, ՈՐ ԱՅԼԵԻՍ ՄԵՁ ԴԵՏ ՉԷ**

Աշխատաւորներն իբրեւ դասակարգ վաղուց վերացել են, բայց աշխատաւորների համերաշխութեան օրը մենք վերականգնեցինք, եւ Մալիտի Մէկը վերստին հանգստեան օր է, այսինքն՝ այդ օրը հայ աշխատաւորը կարող է հանգստանալ:

Բայց հանգստանալու համար նախ եւ առաջ նախ աշխատել է հարկաւոր, իսկ դրանից էլ առաջ՝ աշխատանք:

Հայ մատուցողին ու հայ մատուցողուհուն էլ ոչ ոք թոյլ չի տալ Մալիտի Մէկին կամ այլ տօներին հանգստանալ, որովհետեւ հանգստեան օրերը ռեստորանների ու սրճարանների համար էլ յաջողակ օրեր են:

Կագինոնների ու գիշերային ակումբների աշխատաւորների համար էլ հանգստեան ու տօն օրերը հանգստանալու առումով չափազանց անյարմար օրեր են: Խանութների աշխատողների համար՝ նոյնպէս: Իսկ աշխատանք չունեցող ու գործազուրկ աշխատաւորների համերաշխութեան առումով Մալիտի Մէկը միանգամայն անիմաստ տօն ու անիմաստ հանգստի օր է, որովհետեւ առանց այդ էլ նրանք տարին տասներկու ամիս համերաշխօրէն հանգստանում են:

Ստացում է, որ Մալիտի Մէկը ոչ թէ աշխատաւորների, այլ միայն բիւրոկրատների ու պաշտօնեաների հանգստեան օրն է. այդ օրը նրանք համերաշխօրէն կուտակուած են զանազան ռեստորաններում, ուսում-խումբում եւ նշում են իրենց իսկ վերականգնած տօնը:

**«ՏԱՐԵԳԻՐ»**  
5-2-06

ներ», - համոզուած է Մարիոս Գիրշան:

Եթէ լրագրողը իմանար, որ Քոչարեանի՝ ատամնաբոյժին այցելելիս Երեւանում մի քանի փողոցներ են փակուած, եւ հաւքն իր թեւով չի կարող անցնել ոստիկանական շրթան, դժուար թէ նման պնդում աներ: «Երեւի ձեզ մօտ իրավիճակն է ուրիշ», - տեսածը մեկնաբանելու մեր խնդրանքին ի պատասխան ասում էին լիտվացի լրագրողները:

Իրավիճակն իրօք ուրիշ է: Եւ այդ տարբերութիւնը կարելի է ամբողջացնել մի համեմատութեամբ՝ ինչպէս է ընտրուած Լիտվայի նախագահը եւ ինչպէս է ընտրուած ՀՀ նախագահը: Տարբերութիւնները սրանով, ըստ էութեան, աւարտուած են: Իսկ մեր տեսանկիւնից կատարեալ ժողովրդավարութեան հասած Լիտվայի նախագահը որեւէ խնդիր չունի մարդկանցից վախենալու եւ անվտանգութեան արտառոց միջոցառումներ կիրառելու:

Ի դէպ, երբ մեր թղթակիցը պայմանաւորուածութեան համաձայն գնացել է «Արմենիա Մարիոթ» հիւրանոց՝ Վալդաս Ադամկուսի հետ հարցազրոյց անելու, Լիտվայի նախագահի աշխատակազմի աշխատակիցները չեն ստուգել նոյնիսկ թղթակցի պայուսակը, որը լրիւ բաւարար էր մի քանի ատրճանակ տեղափոխելու համար: Եւ ընդհանրապէս, լաւ կը լինէր, որ մենք մեզ մէկ-մէկ կողքից նայէինք: Պատկերը, որը մեզ համար արդէն սովորական է, իրականում սարսափելի է, եւ կողքից նայելու պարագայում յանկարծ կարող ենք յայտնաբերել, որ մեր «ուրիշ իրավիճակը» աւելի շատ լիչցնում է խոր միջնադարը: Եւ սա ունի միայն մի բացատրութիւն՝ ինչպէս է ընտրուած ՀՀ նախագահը:

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»**  
4-26-06

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի ԽՄԲԱԳԻՐ  
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ  
  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԱՒԻԹԵԱՆ  
Փեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



ԼՈՒՐԵՐ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԵԱՆ. «ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԻՑ Է ԿԱԽՈՒԱԾ ՎԱՐՉԱՊԵՏ ԼԻՆԵԼՍ»

ԵՐԵՎԱՆ, «ԱԶՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Անդրանիկ Մարգարեանն Մայիս ասել է, թե առաջին անգամ ինքնաշարժային պաշտոնում: «Չեմ կարող կանխատեսել, թե քանի տոկոս ձայն կը ստանայ Հանրապետական կուսակցությունը»,- ասել է վարչապետը, որն այսօր մասնակցել է 120 կանանց Հանրապետական կուսակցության անդամատոմսերի յանձնման արարողությանը:



Հայաստանի վարչապետը կը շնորհաւորէ Հանրապետական կուսակցութեան միացողները

Անդրանիկ Մարգարեանը նաեւ ասել է «Ազատութիւն» ռադիոկայանին, որ նոր նախընտրական կողմնակից ստեղծելու մասին խօսելը դեռ վաղ է, եւ նման հարց առաջիմ իրենց կուսակցութիւնում չի քննարկուել:

Անդրադառնալով Ատրպէյճանի աննախադէպ սնտեսական աճին, վարչապետը նշել է. «Եթէ Ատրպէյճանը առաջին եռամսեակում ունեցել է աւելի քան 40 տոկոս աճ, մենք պէտք է համապատասխան միջոցներ ձեռնարկենք»: Նա առանձնապէս շեշտել է տեղեկատուական տեխնոլոգիաները եւ զբօսաշրջութիւնը զարգացնելու անհրաժեշտութիւնը:

Հարցին, թե որտեղ է տեսնում իր տեղը, եթէ յաջորդ նախագահական ընտրութիւններից յետոյ վարչապետ դառնայ Ռոբերտ Քոչարեանը, Անդրանիկ Մարգարեանը պատասխանել է. «Հայաստանում»:

Կիրակի օրը Հանրապետական կուսակցության ինտերնետային էջում գետեղուած հարցազրոյցում վարչապետ Անդրանիկ Մարգարեանը նաեւ գնահատական է տուել կողմնակից մաս կազմող «Օրինաց երկիր» կուսակցութեան դեկավար, Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարեանի՝ վերջերս գերմանական թերթերից մեկի հարցազրոյցում արուած ակնարկին, թէ Հայաստանում տեղի ունեցած նախորդ բոլոր (թէ՛ նախագահական, թէ՛ խորհրդարանական) ընտրութիւնները կեղծուել են:

«Կասկածում եմ, որ Արթուր Բաղդասարեանը նկատի է ունեցել 2003 թուականի համապետական ընտրութիւնները, քանի որ 2003 թուականի նախագահական ընտրութիւնների ժամանակ ՕԵԿ-ը այն հիմնական կուսակցութիւններից էր, որ աստարտում էր Ռոբերտ Քոչարեանին», - յայտարարել է ՀՀԿ-ի նախագահը եւ շարունակել. «Իսկ 2003 թուականի խորհրդարանական ընտրութիւնների, քաղաքական համաձայնութեան ձեռքբերման արդիւնքում Բաղդասարեանը զբաղեցրեց Ազգային ժողովի նախագահի պաշտօնը եւ այս երեք տարիների ընթացքում երկրում տեղի ունեցած բոլոր գործընթացներին թէ Աժ-ում, թէ կառավարութիւնում, ՕԵԿ-ը ունեցել է ակտիվ մասնակցութիւն եւ հետեւաբար ունի պատասխանատուութեան իր բաժինը»:

«Ազատութեամբ Փոխարինելով ՍՊԱՆԱԼԻՔԸ ԶԵՁՈՔԱՑՈՒԱԾ ԶԵ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ազատագրուած տարածքների պաշտպանութիւն» հասարակական կազմակերպութիւնը տարածել է յայտարարութիւն, որում ասուած է.

«Արցախեան ռազմական չարտրութիւնները դիւանագիտական խաչատուակ պարտութեամբ փոխարինելու 2006թ.-ի սպառնալիքը դեռեւս չէզոքացուած չէ: Աւելին, ըստ ամենայնի միջազգային ճնշումը գնալով սաստկանում է, եւ սաստկանում է յատկապէս Հայաստանի նկատմամբ: Դա են հաստատում մասնաւորապէս վարդան Օսկանեանի վերջին օրերի յայտարարութիւններն այն մասին, որ «Հայաստանն արդէն պատրաստ է եւ համաձայն է բոլոր այն գիշտումներին, որոնք հնարաւոր է պատկերացնել»: Խօսքը առաջին հերթին վերաբերում է ազատագրուած տարածքների յանձնմանը: Ընդ որում, Օսկանեանի խօսքերով, «Հայաստանը դա պատրաստ է անել նախքան Ղարաբաղի կարգավիճակի

ճշդումը», ինչպէս նաեւ պատրաստ է «լրջօրէն քննարկելու պատերազմի միւս հետեւանքների վերացման խնդիրները» նոյնպէս՝ ատրպէյճանցիների վերադարձը, որոնց նա կոչում է փախստականներ, եւ խաղաղապահների տեղակայումը, որը նա համարում է անվտանգութեան խնդիր: Բացայայտ պարտուողականութեան այս չափն աննախադէպ է, նոյնիսկ Օսկանեանի համար: Նա նաեւ հաստատում է համանախագահների պնդումը 2006թ.-ի հնարաւորութիւնները չսպառելու մասին, ասելով, որ «չհամաձայնեցուած հարցերը շատ չեն եւ իրենք յոյս ունեն, որ բանակցութիւնների երրորդ փուլը կը լինի վերջինը»:

Փաստօրէն, Հայաստանի անունից բանակցողների կեցուածքը ծայրատրուական հակադրուած է, Հայաստանում, եւ մասնաւորապէս Արցախում, իշխող տրամադրութիւններին: Մասնաւորապէս այդ են վկայում օրերս տեղի ունեցած ԼՂՀ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՅ ՄԻԱՅՆ ՄԷԿ ԽՆԴԻՐ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ժողովրդավարութեան կայացման գործում մեծ է իւրաքանչիւրիս դերը, ամէն մէկը՝ սկսած լրագրողից պէտք է հասկանայ, որ իրենից շատ բան է կախուած», - Ապրիլ 28-ին ՄԱԱ-ում յայտարարեց «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը, ում կարծիքով հասարակութիւնը սկսել է զիտակցել այդ հանգամանքը, նաեւ լաւ հասկանում է իր պատասխանատուութիւնը:

«Իսկ քաղաքական դաշտում անհասկանալի է՝ ինչ է կատարուած: Վակուում է՝ ինտելեկտուալ, հոգեւոր վակուում», - ասում է Նիկոլ Փաշինեանը: Նրա կարծիքով քաղաքական գործիչները չգիտեն իրենց անելիքը. «Ու եթէ իշխանութեան դէպքում պատիվ խնդիրը՝ իշխանութիւն պահելը, կատարուած է, ապա ընդդիմութեան ակտիվ խնդիրը՝ իշխանութիւն վերցնելը կամ ժողովրդին վերադարձնելը չի կատարուած, իրենց անելիքը չեն պատկերացնում»:

Հժ խմբագիրը դժգոհեց ընդհանրապէս քաղաքական գործիչներից, ովքեր մտել են քաղաքականութիւն ու չգիտեն իրենց անելիքը. «Քաղաքական գործիչն ասում է, որ գնայինք Բաղրամեան՝ կը ծեծէին. մարդը մտել է քաղաքականութիւն ու ամենավճռական պահին է հասկանում, որ կարող է եւ ծեծեն»: Փաշինեանը նաեւ անդրադարձաւ ընդդիմութեան «գործուն գղջացող» գործիչներին, ում ձեռքաւարել տարել էին ու մի քանի օր յետոյ գրեցին, թէ իրենք նման բաներ չեն ասել, լրագրողներն են խեղաթիւրել, իրենք հակառակն են ասել: «Ուզում ես ծիծաղել այդ գործիչների վրայ», - ասաց Նիկոլ



«Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեան

Փաշինեանը: Հեռուստատեսային դաշտում ստեղծուած իրավիճակը Նիկոլ Փաշինեանը պայմանաւորեց «Ա1+» հեռուստաընկերութեան բացակայութեամբ: «Եթէ կայ դաշտում «Ա1+»-ի նման հեռուստաընկերութիւն, ստեղծուած է մրցակցութիւն, կոտրուած է ուղղորդուած, համաձայնութեան մթնոլորտը»: Այսօր, ըստ Նիկոլ Փաշինեանի, ոչ թէ տեղեկատուութիւն, այլ աւելի շուտ ապատեղեկատուութիւն է հնչում եթերում. «մարդկանց ապակողմնորոշելու խնդիր են լուծում»:

Նիկոլ Փաշինեանը նաեւ նկատեց, որ Հայաստանում չկայ բնապահպանական, էներգետիկ, տնտեսական խնդիր. Հայաստանում կայ միայն մէկ՝ քաղաքական խնդիր, որը կապուած է Սահմանադրութեան 2-րդ յօդուածի հետ. իշխանութիւնը պատկանում է ժողովրդին: Երբ լուծուել այս հարցը, կը լուծուեն նաեւ մնացած բոլորը:

ՀՆԱՐԱԻՐ Է՝ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՖՈՐՄԱՏԸ ՍԵՂՍՈՒԻ

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Ապրիլ 27-ին տեղի է ունեցել 17+1 ընդդիմադիր ֆորմատի փակ նիստը, որի օրակարգում եղել է երկու հարց: Առաջինը՝ կուսակցութիւնների ու դրանց լիդերների նկատմամբ վերջին տոնաձգութիւնները վերլուծելը, երկրորդը՝ Մայիսի կէսին վերջնական փաստաթուղթ ընդունելն ու քաղաքացիական շարժման մանրամասները ճշգրտելը: Ֆորմատի համակարգող Գառնիկ Մարգարեանը նիստից յետոյ համաձայնել է որոշ տեղեկութիւններ հաղորդել «Ա1+»-ին:

«Ստեղծուած է սպիտակ գիրք, որտեղ ոչ միայն ձեւակերպուած են 98-ից իշխանութիւնների իրականացրած բռնութիւնները, այլ նաեւ դրանց տրուելու է իրաւական գնահատական: Մայիսի երկրորդ կէսին

քաղաքացիական շարժման նախաձեռնող խմբի առաջին ժողով է լինելու, փաստաթուղթ է ընդունուելու, հասարակութեանը տեղեկ ենք պահելու, թէ երբ ենք շարժումը սկսում, որի նպատակն է՝ օր առաջ ազատուել յանցաւոր ռեժիմից:

Բոլորը զգուշացուել են, մեր որոշման մէջ յատակ ձեւակերպուել է, որ նրանք, ովքեր գործիք դարձած՝ մահակ են վերցնում, դիմակ են հագնում եւ գնում են անօրինականութիւնների, վաղ թէ ուշ նրանք պատասխան են տալու: Ստեղծուած է յանձնախումբ, այդ բոլորը ֆիքսուելու է», - վստահեցրել է Գառնիկ Մարգարեանը: Այդ յանձնախումբը, նրա ասելով, ձեւաւորուել է պատգամաւորներից, 17 ֆորմատի լիդերներից:

17-ից երկուսն ներկայ չեն եղել գաղտնի նիստին: Մէկը Ռուբէն Թորոսեանն է, ով երեխաների հետ կապուած ինչ որ խնդիրներ է ունեցել, բացակայութիւնը համարուել է յարգելի, իսկ միւսը՝ ՀԺԿ ներկայացուցիչը, արդէն նիստերին չի մասնակցում խրոնիկաբար, յայտնել է համակարգող Մարգարեանը:

Ֆորմատի ղեկավարը «Ա1+»-ի թղթակցի հետ զրոյցում չի բացատրել, որ ժամանակին իրենց երկնիշ թիւը կարող է նուազել, բայց յոյս է յայտնել, որ ֆորմատի շարքերը կարող են նաեւ համալրուել:

Աժ լսումները, որտեղ խօսուած էր առաջիկայ «տասը տարիներում» խնդրի միջազգային կարգաւորման անհնարինութեան եւ խաղաղապահների տեղակայելու աննպատակաշարժութեան մասին: Նոյն տեսակէտներն են արտայայտում Պաշտպանական բանակի հրամանատարները: Աճող ճնշման փաստը ընդունելով հանդերձ, նրանցից ոմանք աւելի հաւանական են համարում Քոչարեանի հրաժարականը, քան որեւէ պայմանագրի ստորագրութիւն: Հանրութիւնն էլ իր հերթին սկսել է աւելի լաւ պատկերացնել «փոխգիշտում» ասուածի իրական իմաստը:



ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՏԱԼՆԵՐ ՆՈՒԱԾԵՑ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅՔ-ՖԷ»: Յունահունիստական ոճի ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնում 55 կիլո գրամ քաշային կարգում չեմպիոն դարձաւ հայ ըմբիշ Ռոման Ամոյեանը 4:2, 1:5, 5:2 հաշիւներով՝ պարտութեան մատնելով բուլղարացի վեսելին Վենկո-վին: Ամոյեանը 3-րդ անգամ էր դուրս գալիս Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ եւ վերջապէս կարողացաւ նուաճել չեմպիոնի կոչումը: Ամոյեանը նախորդ 2 դէպքերում դարձել էր փոխ-չեմպիոն:



Յունահունիստական ոճի ըմբշամարտի Եւրոպայի ախոյեան Ռոման Ամոյեան

84 կգ քաշային կարգում Հայաստանի դրօշի տակ հանդէս եկող Դենիս Ֆորովը հանդիպեց լեհաստանցի Արթուր Միխալկեւիչին: Առաջին մրցափուլում Ֆորովը յաղթեց խոշոր 4:0 հաշուով եւ արդէն զգացուած էր, որ բաւական ուժեղ է իր մրցակցից: Սակայն 2-րդ մրցափուլում Միխալկեւիչին յաջողուեց յաղթել 3:0 հաշուով եւ հաշիւը հաւասարուեց՝ 1:1: Երրորդ վճռական մրցափուլն աւարտուեց 1:1 հաշուով, սակայն յաղթանակը տրուեց Միխալկեւիչին: 22-ամեայ Ֆորովը առաջին անգամ հանդէս գալով Հայաստանի դրօշի ներքոյ

կարողացաւ նուաճել արծաթէ մետալ: Այսպիսով հայ մարզիկները յունահունիստական ոճի Եւրոպայի առաջնութիւնում նուաճեցին 4 մետալ, որից 2-ը ոսկէ: Սա գերազանց արդիւնք է, որը եւս մէկ անգամ ապացուցում, որ ըմբշամարտում Հայաստանը լաւ աւանդույթներ ունի եւ 2008թ. օլիմպիական խաղերում մետալի իրական հնարաւորութիւններ կան:

ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ՇԱՐԱԴՐԵՑ ԻՐ ՏԵՍԱԿԵՏԸ

ԵՐԵՒԱՆ, «ԼՐԱԳԻՐ»: Գերմանական եւ ռուսական ՁԼՄ-ներին ՀՀ Աժ նախագահ Արթուր Բաղդասարեանի տուած հարցազրոյցը ՀՀ-ում քաղաքական շրջանակներում վերջին օրերին ամենից յաճախ քննարկուող թեման էր: Արթուր Բաղդասարեանը ՀՀ Աժ Մայիսի 2ին նիստից առաջ փորձեց վերջակէտ դնել հարցազրոյցների վերաբերեալ տարատեսակ շուկաներին եւ լուրերին:

այն պատճառով, որ արտաքին քաղաքականութիւնը սահմանադրութեան համաձայն որոշում է ՀՀ նախագահը, այլ նաեւ այն պարզ իրողութիւնից ելնելով, որ ես խօսում եմ ոչ որ վաղը առաւօտեան ՆԱՏՕ-ի անդամ դառնալու մասին, այլ ես խօսում եմ մի ապագայի մասին, որ ձգուած է աւելի երկար, քան այս կառավարութեան 12 կամ 20 ամիսներն են: Ես խօսում եմ մի հեռանկարի մասին, ուր պէտք է յայտնուի մեր երկիրը: Ինչպիսի՞նք եմ ես տեսնում ՀՀ ապագան: Տեսնում եմ Եւրոպայի Միութեան մէջ, ոչ թէ Ռուսաստանի Դաշնութիւն-Բեյրութ միութեան մէջ: Տեսնում եմ հետեւողական եւրասիտեգրացիայի մէջ: Իմ հրապարակային դիրքորոշման մէջ եւ կողմնակիցներն են եւ ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւնների խորացմանը: Գերմանական «Ֆրանկֆուրտ Ալթեմայնէ» թերթին տուած հարցազրոյցի վերաբերեալ ասեմ, որ հարցազրոյցը ուշադիր ընթերցելիս կը տեսնէք, որ ես խօսում եմ մի ապագայի մասին, որը, իմ կարծիքով, ճիշդ է իմ երկրի համար: Ես այդ մասին ասել եմ եւ Ռուսաստանում, եւ Ուաշինգտոնում, եւ Բրիւսելում, եւ Փարիզում: Ես քաջածանօթ եմ այն արտաքին քաղաքականութեանը, որն այսօր իրականացուած է: Այսօր ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցութեան խնդիր դրուած չէ, ոչ միայն

«Իմ բոլոր հրապարակային ելույթների հետ ծանօթ էք: Ես յստակ արտայայտել եմ իմ եւ այն քաղաքական ուժի դիրքորոշումը, որ ես եմ ներկայացնում: Մենք կողմնակից ենք Հայաստանի հետեւողական եւրոպական ինտեգրման կուրսին եւ ՆԱՏՕ-ի հետ յարաբերութիւնների խորացմանը: Գերմանական «Ֆրանկֆուրտ Ալթեմայնէ» թերթին տուած հարցազրոյցի վերաբերեալ ասեմ, որ հարցազրոյցը ուշադիր ընթերցելիս կը տեսնէք, որ ես խօսում եմ մի ապագայի մասին, որը, իմ կարծիքով, ճիշդ է իմ երկրի համար: Ես այդ մասին ասել եմ եւ Ռուսաստանում, եւ Ուաշինգտոնում, եւ Բրիւսելում, եւ Փարիզում: Ես քաջածանօթ եմ այն արտաքին քաղաքականութեանը, որն այսօր իրականացուած է: Այսօր ՀՀ արտաքին քաղաքականութեան օրակարգում ՆԱՏՕ-ին անդամակցութեան խնդիր դրուած չէ, ոչ միայն

ՓԱՐԻՉ-ԱՆԳԱՐԱ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն  
օրուայ ազատագրուած եւ 5 հազար Եւրոյի տուգանք:  
Միւս կողմէ, Չուիցերական դատարանը վեց ամսուայ բանտարկութեան վճիռ արձակեց թուրքիոյ Բանուրական կուսակցութեան նախագահ Տոդու Փերինչէքի նկատմամբ, որը անցեալ տարի գուլիցերա-

կան վինթերթուր նահանգին մէջ ունեցած իր մէկ ելույթի ընթացքին յայտարարած էր, թէ «Հայոց Յեղասպանութիւն չէ եղած»:  
Այս մասին հաղորդելով Պոլսոյ «Մարմարա» օրաթերթը կը յիշեցնէ, որ Փերինչէք 2005-ի Յուլիս 23-ին բանտարկուած էր Չուիցերիոյ մէջ եւ ապա ազատ արձակուած՝ հարցաքննուելէ ետք:

ԹՈՒՐԹԻՈՅ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏ Է ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ ՀՐԱՆԴ ՏԻՆԿԻ ԳՈՐԾԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅ»:  
Ինչպէս հաղորդուած է «Անատոլու» գործակալութիւնը, երկուշաբթի օրը Անգարայի վերաքննիչ դատարանը առաջին ատենի դատարան է վերադարձրել Պոլսոյ «Ակոս» երկլեզու թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինկի գործը:  
Անցեալ տարուայ Հոկտեմբերին իսթանպուլի դատարանը 2004 թուականին հրատարակած յօդուածի համար՝ թուրքական ինքնութիւնը վիրաւորելու մեղադրանքով Տինկին վեց ամսուայ պայմանական ազատագրկման էր դատապարտել:  
«Ֆրանսիրես» գործակալութեան

փոխանցմամբ, Անգարայի վերաքննիչ դատարանը հետ է վերադարձրել Տինկի հայցը՝ ընթացակարգային սխալների պատճառով:  
Հրանդ Տինկի դատապաշտպան Ֆեթիշ Չեթինը «Ֆրանսիրես»-ի հետ զրոյցում հրաժարուել է հաստատել «Անատոլու» գործակալութեան տարածած լուրը՝ նշելով, թէ «վերաքննիչ դատարանից որեւէ բառ չի ստացել»:  
Այս գործի առիթով Հրանդ Տինկը աւելի վաղ «Ազատութիւն» ռադիոկայանի հարցազրոյցում յայտարարել էր, թէ մեղաւոր ճանաչուելու դէպքում «հաւաքելու է ընտանիքն ու հեռանալու է երկրից»:

ՕՐՀԱՆ ՓԱՍՈՒԿԸ «ԹԱՅՄ»-Ի ԱՄԵՆԱԳՆԵՑԻԿ ՄԱՐԴԱՆՑ ՑՈՒՑԱԿՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅ»:  
Թուրք յայտնի գրող Օրհան Փամուկը, որը պնդել է, թէ Թուրքիայում մէկ միլիոն հայ է սպանուել, ընդգրկուել է «Թայմ» ամերիկեան շաբաթականի աշխարհի ամենաազդեցիկ մարդկանց ցուցակում:  
Անցած տարի շուեյցարական թերթերից մէկին տուած հարցազրոյցում Փամուկին ասել էր, որ Օսմանեան Թուրքիայում մէկ միլիոն հայ է սպանուել, ինչից յետոյ նրան քրէական մեղադրանք էր առաջադրուել «թուրքերի ազգային ինք-

նութիւնը վիրաւորելու համար»:  
Այս տարուայ սկզբին թուրքական դատարանը հրաժարուեց մեղադրանքներից եւ կարճեց Փամուկի գործը:  
«Թայմ» շաբաթականի ցուցակում, որը պարբերականը սկսել է տպագրել 3 տարի առաջ, այս տարի ընդգրկուել են ԱՄՆ-ի նախագահ Ճորժ Պուշը, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ԱՄՆ-ի պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը, «Մայքրոսոֆթ»-ի ղեկավար Բիլ Գեյթսը եւ այլօք:

ԱԼԻԵՒԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՐԵՒԷ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՉԻ ՀՆՉԵԼ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅ»:  
«Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը իր ամերիկեան այցի ընթացքում Ուաշինգթոնից որեւէ քննադատութիւն չի լսել», - հաւաստիացրել է նրա աշխատակազմի արտաքին յարաբերութիւնների ղեկարտամենտի ղեկավար Նովրուզ Մամեդովը:  
«Ես ներկայ եմ եղել բոլոր հանդիպումներին, այդ թուում նաեւ Ճորժ Պուշի հետ հանդիպմանը: Հաւատացէք ինձ, կարող եմ անկեղծ ասել, որ չի եղել ընտրութիւնների, մարդու իրաւունքների, ժողովրդավարութեան մասին որեւէ խօսակցութիւն, որը կարելի լինէր ընկալել որպէս քննադատութիւն», - ասել է Մամեդովը:  
Նրա վկայութեամբ, այցը շատ կարեւոր էր, «քանզի ԱՄՆ-ը արդէն մտադիր է Ատրպէյճանի հետ համագործակցութիւնը բոլոր բնագաւառներում բարձրացնել գործընկերութեան մակարդակի»:  
«Մենք կարծում ենք, որ Արեւմուտքի եւ Ամերիկայի հետ Ատրպէյճանի համագործակցութեան առաջին փուլը կ'աւարտուի 2006 թուականին Պաքու - Ջէյհան նաւթատարի գործարկումից յետոյ: Դրանից յետոյ նոր դարաշրջան կը բացուի», - կարծիք է յայտնել Մամեդովը:

«Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը իր ամերիկեան այցի ընթացքում Ուաշինգթոնից որեւէ քննադատութիւն չի լսել», - հաւաստիացրել է նրա աշխատակազմի արտաքին յարաբերութիւնների ղեկարտամենտի ղեկավար Նովրուզ Մամեդովը:  
«Ես ներկայ եմ եղել բոլոր հանդիպումներին, այդ թուում նաեւ Ճորժ Պուշի հետ հանդիպմանը: Հաւատացէք ինձ, կարող եմ անկեղծ ասել, որ չի եղել ընտրութիւնների, մարդու իրաւունքների, ժողովրդավարութեան մասին որեւէ խօսակցութիւն, որը կարելի լինէր ընկալել որպէս քննադատութիւն», - ասել է Մամեդովը:  
Նրա վկայութեամբ, այցը շատ կարեւոր էր, «քանզի ԱՄՆ-ը արդէն մտադիր է Ատրպէյճանի հետ համագործակցութիւնը բոլոր բնագաւառներում բարձրացնել գործընկերութեան մակարդակի»:  
«Մենք կարծում ենք, որ Արեւմուտքի եւ Ամերիկայի հետ Ատրպէյճանի համագործակցութեան առաջին փուլը կ'աւարտուի 2006 թուականին Պաքու - Ջէյհան նաւթատարի գործարկումից յետոյ: Դրանից յետոյ նոր դարաշրջան կը բացուի», - կարծիք է յայտնել Մամեդովը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 1-էն  
նականին մէջ զգալի պատնէշներ կան այդ իրաւունքները արդիւնաւէտ պաշտպանելու համար. «Դատական համակարգը շատ քիչ անկախութիւն ունի»:  
Երկրէն ներս ժողովրդավարութիւն հաստատելու գործին մէջ մամուլի կարեւորութեան անդրադառնալով տեղեկագիրը կը յայտնէ որ, Հայաստանի մամուլը 2002-2003 «կիսով չափ ազատ»-էն այժմ դարձած է «ոչ ազատ»:  
Ըստ կազմակերպութեան, անցեալ տարի մամուլի ազատութեան բնագաւառէն ներս Հայաստան յառաջընթաց չէ արձանագրած. «Հակառակ Եւրասիոյ հոլդինգի ու տեղական կառույցներու՝ «Ա1+» անկախ հեռուստաընկերութեան եթեր տրամադրելու յորդորներուն, իշխանութիւնը 7-րդ անգամ մերժեց հեռուստաընկերութեան մրցութային առա-

ջարկը», - կը հաստատէ գեկոյցը:  
«Ընդդիմադիր հայեացքներ արտայայտողներուն յաճախ կ'ահաբեկեն, կ'ենթարկեն բռնութիւններու եւ հարածանքներու», - կը շարունակէ գեկոյցը. «Ճիշդ է, լրագրողի վրայ յարձակում գործելու համար 2004 թուականին ինչ-որ մէկը վեց ամսուայ ազատագրկման դատապարտուեցաւ, սակայն մինչեւ վերջ չկրեց իր պատիժը ու տարեկերջին ազատ արձակուեցաւ»:  
Տեղեկագիրը կը յիշէ, որ Սահմանադրական հանրաքուէի քարոզարշաւի ընթացքին «Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդումները մի քանի օրով խափանուեցան, ինչպէս 2004 թուականին, պաշտօնական մեկնաբանութիւնը նոյնն էր՝ տեխնիկական պատճառներով»:  
Ընդհանրապէս այս պատճառաւ յաջորդական 4-րդ տարին ըլլալով Հայաստան կը բնորոշուի որպէս երկիր մը, ուր մամուլը ազատ չէ:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

# ԱՊՐԻԼ 24-Ը

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻ ՏԱԿ

### ՄԵՁ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ.- ՑԱԲԱԼԻ Է, ԲԱՅՑ ԹՈՂ ՉԽԱԲՈՒԷԻՔ, ԿԱՆԽԱՏԵՍԷԻՔ, ՊԱՇՏՊԱՆՈՒԷԻՔ...

Ծ.Խ.

Հանդիպել կը հրատարակենք միջազգային համբալի տիրացած, իրա- նահայ հոգեբան, Սպահանի հոգեբանական համալսարանի երկար տա- րիներու տեսուչ Դոկտ. Մեսրոպ Պալայեանի սոյն յօդուածը, որով կը վերլուծէ Ապրիլ 24ը հոգեբանութեան լոյսին տակ:

«ՄԱՍԻՍ»

### ԴՈՎՏ. ՄԵՍՐՈՊ ԲԱԼԱՅԵԱՆ

Եղեռնի յիսնամեակից յետոյ, բարեբախտաբար, սկսուեցին որոշ փորձեր կատարուել Եղեռնը ու- սումնասիրել եւ եւ վերլուծելու համար զանազան տեսանկիւննե- րից, գիտական, առարկայական մե- թոտներով: Այդպիսի փորձերն են, օրինակ՝ փաստերով եւ թուերով որոշելու հայ ժողովուրդի կրած մարդկային, մշակութային եւ նիւ- թական կորուստները, Արեւմտեան Հայաստանում եւ Արեւելեան Հա- յաստանում (օրինակ՝ Կարս, Ար- տասան, Օլթի, Նախիջեւան, Շուշի եւ այլուր):

Մի քանի տասնեակ տարիներ ի փորձից յետոյ հայը գիտակցեց, որ աշխարհը մեր բողոքի եւ պա- հանջի ձայնը լսելու համար յստակ եւ առարկայական փաստերի պէտք ունի:

Երկարատեւ միալար լացը, մորմոքը, մեղկութիւնը ոչ միայն թուլացնում են մարդու կամքը, յուսալքում են, այլեւ դիմացի պա- տասխանատու եւ սովորական ան- հատները մօտ ստեղծում են մի տեսակ արգահատանքի, հակակ- րանքի, զզուանքի, նոյնիսկ երբեմն ստեղծութեան զգացում:

Խօսել սովահար եւ սովամահ երեխաների, մորթուող մայրերի, Եփրատի մէջ ինքնասպան եղած աղջիկների մասին, անշուշտ, բա- ցարձակ անհրաժեշտութիւն է մե- ծապէս ազդու. բայց ոչ երբեք բաւարար, եւ սա թէ հայ նոր սերնդի թէ օտարների համար:

Բազմաթիւ առիթներ եմ ու- նեցել խօսելու հայկական կոտոր- ածների մասին իրանցի եւ օտա- րագրի սովորական եւ պետական բարձր պաշտօններ ունեցող մարդ- կանց հետ՝ պարսիկ, Ֆրանսացի, այլազգի ուսանողների հետ, զանա- զան շրջաններում, ընտանիքնե- րում: Բոլորն էլ մարդկային բարո- յական հողի վրայ ցաւակցում են մեզ, բայց միայն այսքան: Երկար ժամանակ փաստօրէն տեսանք, որ ոչ ոք պատրաստ չէր մատ անգամ շարժելու, որպէսզի 1915ի Եղեռնը ճանաչուի պաշտօնապէս եւ պատ- շաճ հատուցումը կատարուի հայ ժողովրդին: (Յետագային հայ ժո- ղովուրդը արձանագրեց նուաճում- ներ այդ մարզում՝ Եւրոպական խորհրդարանի եւ Ռուսիոյ Դոմա- յի պաշտօնական ճանաչումը ցե- դասպանութեան):

Ամէնը մօտաւորապէս սա էին ասում.

«Շատ ցաւում ենք, չպիտի լինէր Եղեռն: Բայց արդէն եղածը եղած է: Պիտի մոռնալ»: Հենց մի՞թէ չկրկնուեց նոյնը Երեւանում (Ապրիլ 1995ին), երբ Գերմանիայի պաշտօնական հաւատարմատարը Հայաստանի Հանրապետութիւնում խորհուրդ տուեց հայ ժողովուր- դին՝ «Յիշեցէք ձեր նահատակնե- րին, բայց առաջ նայէք», որին պատասխանեց հայ ակադեմիկոս- պատմաբանը՝ «Թող թուրքիան պաշտօնապէս ճանաչի 1915ի Յե-

ղասպանութիւնը: Գերմանիան էլ ընդունի իր մեղսակցութիւնը այդ Յեղասպանութեան մէջ: Յետոյ մենք կը մտածենք առաջ նայելուն մա- սին»:

Որոշ օտարներ էլ, երբ շարու- նակում էք նոյն թեման, պատաս- խանում են.-

«Շատ լաւ, չկոտորուէիք, պատշապանուէիք»:

Իսկ երբ ասում էք, որ թշնա- մին նենգաբար գործեց, առաջին հերթին տղամարդկանց, 16-ից մին- չեւ 60 տարեկան, բանակ ուղարկե- լու պատրուակով տարաւ եւ ան- մարդաբնակ ձորերում եւ կիրճե- րում կոտորեց, նախճիրի ենթար- կեց Պոլսի հայ մտաւորականներին, զլիսատելու համար հայ ժողովուրդն եւ յետոյ նոր սկսուեց երեխաների, կանանց ու ծերերի տեղահանու- թիւնն ու կոտորածը, պատասխա- նում են.-

«Զխաբուէիք, թող ձեր ղեկա- վարները նախատեսէին, թող «Իթ- թիհատի» գաղտնի որոշումներից տեղեակ լինէին, ունենային քաղա- քականութիւն, այսինքն՝ ունենա- յին նախատեսութիւն, այսինքն՝ հեռատեսութիւն» - եզրակացնում են նրանք:

Բարեբախտաբար, արդէն 1965ից Ապրիլ 24-ը դարձել է ոչ միայն սպառն, այլ նաեւ բողոքի, պահանջատրուութեան եւ մեր ան- հուն ցասումը արտայայտելու օր, ի ցոյց եւ ի լուր աշխարհի: Բողոքը, ցոյցը, արի կեցուածքը աւելի ու- շաղրութիւն, աւելի համակրանք են շահում այս աշխարհում քան թէ լացը, ողբը, կրաւորական մեղկ վիճակը: Միթէ՞ վերջին տարիներ ի դէպքերի գահավէժ ընթացքը, Հայաստանում եւ Արցախում մէկ անգամ եւս չամրագրեցի՞ր եւ չամ- րապնդեցի՞ր այդ ուղեգծի ճշտու- թիւնը եւ արդիւնաւէտութիւնը:

Չնայած այս փորձագրութեան՝ սահմանները ճշդուած են «Ապրիլ 24-ը հոգեբանութեան լոյսի տակ» վերտառութեամբ, բայց անմիջա- պէս ասենք, որ դա շատ լայն եւ ընդարձակ թեմա է եւ դժուար թէ ընդգրկուի մէկ լրագրական յօդ- ուածի մէջ:

Նիւթը զարգացնելու եւ սպա- ուելու համար պիտի ներկայացնել հայ մարդու հոգեբանութիւնը, թէ որպէս անհատ եւ թէ որպէս հաւա- քականութիւն: Պէտք էտալ հայ ժողովրդի հոգեբանութիւնը, պէտք է ներկայացնել հայ ղեկավարու- թեան հոգեբանութիւնը: Յետոյ, պիտի հաշուել, թէ հայ ղեկավա- րութիւնը ինչ աստիճանի նկատի առաւ գործի հոգեբանական կողմը բոլոր տեսանկիւններից:

Մեր որդեգրած տակտիկա- յում եւ ստրատեգիայում ի՞նչ հո- գեբանական սխալներ գործեցինք: Եւ սա՞ բոլոր ոլորտներում եւ բնագաւառներում: Նոյնիսկ փոր- ձենք իմանալ, թէ ի՞նչ հոգեբանու- թեան տէր էին հայ պատուհասող հերոսները՝ Սողոմոն Թեւ լիրեանը, Արշաւիր Շիրակեանը, Արամ Եր- կանեանը, Միսաք Թուրքեանը եւ

ուրիշները: Պէտք է ներկայացնել օսմանցի թուրքի հոգեբանութիւնը, օսմանցին որպէս հաւաքական ոյժ: Իթթիհատի ղեկավարները՝ Թալէ- աթի, Բեհհէդդին Շաքիրի, Նազը- մի, էնվերի, Օեմալի հոգեբանական ուրոյն գծերը: Հոգեբանական ի՞նչ օրէնքներից եւ մեխանիզմներից օգտուեցին նրանք, իրենց մեծա- գոյն ոճիւրը կատարեալ դարձնելու եւ աշխարհից թաքցնելու համար:

Վերին աստիճանի հետաքը- քիր եւ գիտականօրէն շահեկան ուսումնասիրութիւնների նիւթ որ սակայն, մի յօդուածում, նոյնիսկ թուրքի կերպով չի կարելի սպա- ուել:

Ուրեմն փորձենք գոնէ հպան- ցիկ, տալ խիստ համառօտ մի ուրուագիծ այն բոլորից, որ կարե- լի է ասել այս բնագաւառում:

Օրինակ՝ հոգեբանօրէն ի՞նչ պիտի մարդիկ էին Թալէաթը, էն- վերը, Դոկտ. Բեհհէդդինը, Դոկտ. Նազըմը, Ազմինը եւ իրենց միւս գործընկերները:

Այդ մասին եւ շատ փնտրուե- ցանք եմ կատարել աղբիւրներ գտնե- լու համար: Դժբախտաբար շատ քիչ բան եմ գտել, հակառակ նացի ցեղասպաններին, որոնց մասին բա- ւական առատ տուեալներ կան:

Բայց եւ այնպէս, հիմնուելով այս քիչ վրայ եւ այս համեմատելով նացի ղեկավարների եւ ուրիշ յայտնի ոճրագործների հետ, որոնց ծանօթ է «Հոգեբանութեան պատմու- թիւնը», կարելի է եզրակացնել, որ սրանց մի մասը եղել է անհատներ, որ ուրիշ եւ տարբեր պայմաննե- րում, թերեւս, անհատական ոճիւր- ներ գործէին, բայց ցեղասպանու- թեան չէին ձեռնարկի:

Եթէ Ադուլֆ Հիտլերը եւ իր նացի կուսակցութիւնը գործի գլուխ չզար, Այշմանը, մեծ հաւանակա- նութեամբ, հազարներով հրեայ երե- իսներ, կանայք եւ տղամարդիկ քուրաներում չայլէր: Կարօ Սա- սունու եւ ուրիշների յուշերում, այս տեսակէտից, խիստ նշանակա- լից դրուագներն ենք հանդիպում: Թալէաթը եւ Իթթիհատի ուրիշ ղեկավարներ, Պոլսի մայր եկեղե- ցում, պաշտօնապէս մասնակցում են հայկական գրերի գիւտի 1500- ամեակի մեծ յօբելեանին:

1909-ի Ատանայի 30 հազար հայերի ջարդից յետոյ, «Իթթի- հատ» երկրորդական պատասխա- նատուութիւն ունեցող մի քան ջարդարարների մահապատժի են- թարկեց (Մահապատժի ենթար- կուողների մեծ մասը Իթթիհատ կուսակցութեան մոլի հակառա- կորդներից էին):

Այս եւ նման դրուագները արդեօք հայերին խաբկանքի մատ- նելու եւ իրենց իսկական մութ ծրագրները սքողելու համար էր, թէ՞ հայերին համոզելու համար էր, որ մէկ անգամ ընդմիջու չհրաժար- ունէ իրենց մարդկային եւ ազգա- յին նուազագոյն իրաւունքներից:

Բոլոր պարագաներում կայ այն միջնորդը, որ կոչում ենք «հոգեբանական միջնորդ» եւ որ ոճրային նպատակը պայմաննե- րում մարդասպանութեան տեսա- կէտից ամենաընդունակ մարդուն էլ կարող է ոճրագործ դարձնել:

Երիտ. Թուրքերը (Իթթիհատ կուսակցութիւնը), որոնց շարքում կային նոյնիսկ համալսարանաւարտ- ներ եւ բժիշկներ, բոլոր պայման- ներում ձգտում էին լուծում գտնել թուրքական արդէն խարխլած կայսրութեան խնդիրների համար, այսպէս ասած 19րդ դարի «Հիւանդ մարդը» փրկելու:

Իթթիհատի ղեկավարները ձգտում էին ամէն գնով փրկել

Օսմանեան կայսրութիւնը փլու- գումից: Արդէն ձեռքից գնացել էր Սերբիան, Պուլկարիան, Յունաս- տանը, Մակեդոնիան: Ձգտում էին փրկել այն, որ մինչ այն մնացել էր (թէկուզ 20-րդ դարի ամենամեծ ցեղասպանութեան գնով): Նրանք միջոցներ էին փնտրում այդ նպա- տակին հասնելու համար: Այստեղ խոր ուշադրութիւն պիտի դարձ- նել այն խիստ կարեւոր հանգա- մանքին, որ այդ ժամանակահատ- ուածում Գերմանիայում եւ Թուրք- իայում տիրողը (շնորհիւ նախա- պատերազմական վիճակին 1913-14 թթ.) ցեղապաշտական, ցեղամոլա- կան, բանթուրանական (Թուրքիա- յում) միջնորդներ էր եւ Իթթիհատի ղեկավարներն էլ, բնականօրէն, իրենց մէջ կրում էին գերագանցա- պէս կուռող-աւերող մի ցեղի են- թահող: Ուրեմն, պարզ էր՝ կ'ընկ- նէին ցեղամոլութեան ճահիճը:

Ես արդէն յայտնել եմ այդ կարծիքը, որ ցեղամոլութիւնը (ուս- սիզմը) եւս մի հոգեկան հիւանդու- թիւն է, որ իշխում եւ գերակայում է միւս կայուն, մնացուն եւ նոյնիսկ ժամանակաւոր եւ մակերեսային հոգեվիճակներին: Ցեղամոլութիւնը մտքի եւ հոգու սուր թունաւորում է: Եւ ինչպէս որ մարմնի սուրբ թունաւորումը խիստ վտանգաւոր է, նոյնը կարելի է ասել նաեւ մտքի եւ հոգու սուր թունաւորման մա- սին:

Ահա այդպիսի մի վիճակում Իթթիհատի ղեկավարները որո- շում են հայ ժողովրդի վերջնա- կան, ամբողջական եւ արմատական բնաջնջումը պետականօրէն եւ ծրագրուած ձեւով, հաշուելով որ դա է «Հիւանդ» փրկելու միակ միջոցը եւ Թուրքիոյ բոլոր խնդիր- ների լուծման միակ ճամբան:

Բնական է, որ հոգեբանական այս վերլուծութիւնը հիւլէ անգամ չի արդարացնում կատարուած ոճի- րը: Ամէն սպանութիւն, ոճիւր կա- րող է ունենալ իր հոգեբանական մեկնաբանութիւնը, բայց դա չի կարող ծառայել նոյնիսկ որպէս «մեղմացուցիչ հանգամանք յան- ցանաց» Այս հիման վրայ, նացի 24 ցեղասպանները կախուեցին Նիւ- րենբերգում: (Բայց, ո՞ւր մնաց հայկական Նիւրենբերգը): 1915ին թրքական ղեկավարութիւնը խնդրի հոգեբանական կողմն է նկատի առնում նաեւ, երբ, գոնէ ջարդերի սկզբնական շրջանում ջանում է ոչ միայն աշխարհից, այլ նոյնիսկ թուրք գանգուածներից թաքցնել (ներքին գործոց նախարար Թալէ- աթ Փաշայի յայտնի հեռագրի «խիստ գաղտնի») լինելու հանգա- մանքը դրանով է բացատրուում) հայկական ջարդերի համընդհա- նուր ծաւալը (այդ նպատակին է ծառայում արհեստավարժ մար- դասպաններին բանտից ազատելը: Հայ կարաւաններին կողոպտելու եւ կոտորելու համար): Իսկ հետագա- յին նոյն գանգուածներին մէջ հրահ- րել ցեղապաշտական եւ հակահայ մոլեռանդ զգացումներ ու ամենա- վայրենի եւ հակամարդկային ստո- րին յոյգերը՝ ատելութիւն, կողո- պուտ, անասնական բնազդների յագուրդ տալը եւ սաղիզմի գրեթէ բոլոր տեսակները:

Իսկ լաւ գիտենք, որ ցանկա- ցած պետութեան համար, այդ բա- նը անել այնքան դժուար չի, մա- նաւանդ եթէ որոշի օգտագործել հոգեբանութեան օրինաւորութիւն- ները:

Ցեղապաշտութիւնը որպէս հո- գեվիճակ, խիստ թունաւորուած միջնորդում կարող է իշխել նոյն-



ՆՇԱՍԱՐ

ԶԵՂԱՒ ՍՐԲԱԶԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Այս «նշմար»ը կը գրուի որոշ ճշմարտութիւններ արտայայտելու համար, ճշմարտութիւններ որոնք կ'իջնան պատշաճութեան եւ անպատշաճութեան, ինչպէս նաեւ փափկանկատութեան եւ անփափկանկատութեան ծիրէն ներս: Թերեւս լաւ կ'ըլլայ նաեւ աւելցնել կենցաղավարութեան ծիրը, միջ-համայնքային խողովոյ գոյակցութեան պահանջները հարցը, իսկ եթէ ուզուի աւելի հեռուները երթալ, պիտի ըսենք նաեւ՝ բարձրաստիճան եկեղեցականներու արտայայտութեանց սահմանը, անոնց իրաւասութիւնները, ազգային, կրօնական երեւոյթներու նկատմամբ անոնց բռնած դիրքը եւ հետեւած ուղին, եւ այլն: Այս բոլորը ըսելէն ետք ուրեմն, յայտնի կը դառնայ թէ ինչո՞ւ այս «նշմար»ը կը գրուի եւ որո՞ւ հասցէին է ուղղուած: Ամէն պարագայի տակ, պիտի չարագար սխալին անոնք որոնք չարամտութիւն կամ անբարեացակամ վերաբերմունք գտնեն այս ակնարկին մէջ: Փնտուռածը, ուզուածը՝ պարզապէս որոշ գոյակցութեան մը անհրաժեշտութիւնն է զոր եթէ կիրարկեն պատասխանատու պաշտօններու վրայ գտնուող անձեր, թէ եկեղեցական եւ թէ աշխարհական մարդերէն ներս, աւելի հեզասահ եւ նուազ ինդրայարուց կը դառնայ մեր համայնքային կեանքը:

ԻՆՉՈՒՒ ԱՅՍ ՆՇԱՍԱՐԸ  
Կրնայինք այս «նշմար»ը գետեղել «Ազատ Բեմ»ի կամ «Բաց Նամակ»ի տարազներուն տակ, եւ գալն ուղղել Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Յովնան Արքեպս. Տէրախեանին, առ ի տեղեկութիւն, եւ քաղաքս հիւրաբար այցելող էջմիածնական Եպիսկոպոս, Սեպուհ Եպս. Չուլճեանին, մասամբ մը խրատ, եւ մասամբ մըն ալ գոյակցողով: Ի վերջոյ, առնուազն եկեղեցականներու չափ, եւ երբեմն ալ անոնցմէ աւելի, մենք հետամուտ, եւ նախանձախնդիր ենք, իբրեւ առաքելական եկեղեցւոյ գաւակներ, եւ հասարակական մտածողութեան պատասխանատուներ, համայնքային խողովոյ թեման, մանաւանդ գոյակցութեան յորդոր կարգալ անոնց նկատմամբ, որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար կը «մեղանչեն»: Ինչը՞ մեզ մղեց նման մտածումներու:  
Կիրակի, Ապրիլ 23, 2006 թուականին, որ այս տարի կը գուզադիպէր Եղեռնի Ոգեկոչման 91րդ տարեւոյցին, Փաստինայի Ս. Գրիգոր

Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենար հոգեհանգստեան արարողութիւն եւ պաշտօն, Հ.Բ.Լ.Մ.եան Շրջանակային Յանձնախումբի եւ այլոց խնդրանքով, այս մեծ միութեան հանգուցեալ ղեկավարներու յիշատակին: Այս յիշարժան առիթով, եկեղեցի փութացած էին բաւական թիւով ազգայիններ: Հոգեհանգստեան պաշտօնին պիտի յաջորդէր խաչքարի գետեղման արարողութիւն մը Հ.Բ.Լ.Մ.ի կեդրոնէն ներս:  
Հոգեպարար եկեղեցական արարողութիւն, դրուած Առաջնորդ Սրբազանին հովանաւորութեան տակ: Առաջնորդ Սրբազանը կ'ունենայ, ըստ իր սովորութեան, պատրաստուած ելոյթ մը, ներբողելու Հ.Բ.Լ.Մ.ի անցնող 100 տարիներու գործունէութիւնը: Իր խօսքին ընթացքին, Սրբազանը կը յատարարէ որ օրուայ պատարագիչն էր Հայաստանի Գուգարաց Շրջանի Առաջնորդ Սեպուհ Եպս. Չուլճեան, որ նաեւ պիտի իր խօսքը ունենար Հ.Բ.Լ.Մ.եան, եւ Ապրիլեան Եղեռնի 91րդ տարեւոյցի ոգեկոչման առիթ: Չուլճեան Սրբազան կը գտնուէր հիւրաբար մեր գաղութը, եւ բաւականին երիտասարդ եւ խանդավառ եկեղեցական մը կը թուէր: Առաջնորդէն ետք, ինք եւս սկսաւ իր քարոզելոյթին, զոր գնահատելի եւ գովելի պիտի գտնէինք եթէ Չուլճեան Սրբազան երկու բանի մասին արտայայտուած չըլլար: Այդ երկու հարցերը կը հանդիսանային.  
ա. Իր անվերապահ հաւատարմութիւնը Քոչարեանական իշխանութեան, եւ անոր գործունէութեան:  
բ. Իր յարձակում-քննադատութիւնները, ընդհանրապէս Հայաստանէն ներս գործող աղանդաւորներու հասցէին, որոնք շարքին, յակնադէմ անուանէ կը դասէր Հայ Աւետարանական համայնքը:  
Ի՞նչ կը վերաբերի Չուլճեան Սրբազանին հաւատարմութեան, Քոչարեանական իշխանութեան նկատմամբ, մենք խօսք չունինք հոս, իր գիտնալիքն է, վստահաբար իշխանութեանց հաճելի ըլլալու մարմաջ մը կայ իր մօտ: Ազատ է ինք իր քաղաքական կարծիքներուն մէջ: Թէեւ ինք նաեւ կրնար արտայայտուիլ Հայաստանէն արտագաղթի մասին, անոր պատճառներու մասին, ժողովրդական դժգոհութեան, փտախտի եւ նման երեւոյթներու մասին, որոնք կը յատարարուին:

Շաք.ը էջ 17

ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԹՈՐԳՈՄ ՓՕՍԹԱՅԱՆ

Իմ գրական, Ազգային եւ կրթական յիմնամեայ ծառայութեանց եւ ծննդեանս ութսունամեայ տարեդարձին առթիւ՝ ինծի ընծայուած յոբելինական հանդիսութեան համար, ունիմ խօսք շնորհակալութեան: Իմ երախտագիտական խորագրաց շնորհակալութիւններս կը փափաքիմ յայտնել՝ Ամենայն Հայոց ազգընտիր կաթողիկոս՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ներսիսեան վեհափառ Կաթողիկոսին, ինծի պարգեւած իր սրբատառ կոնդակին եւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ շքանշանի շնորհաւորութեանց համար:  
Շնորհակալ եմ Հայաստանեայց եկեղեցւոյ Արեւմտեան թեմի բարեխնամ Առաջնորդ՝ Տ. Յովնան Ս. Արքեպս. Տէրախեանին, Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոսին կատարած իր բարեխօսութեանը եւ յոբելինական հանդէսին հովանաւորութիւնը ստանձնելուն համար:  
Շնորհակալ եմ այս յոբելինական ձեռնարկը հովանաւորող Հ.Բ.Լ. Միութեան, Թէքէեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեանց: Պոլսահայ եւ Իրանահայ Միութեանց:  
Իմ յատուկ շնորհակալութիւններս Մաշտոց Գոյէճի արժանընտիր նախագահ՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանին որ բացի հովանաւորութեանց մասնակցելէ՝ ստանձնեց նաեւ ձեռնարկի կազմակերպչական դժուարին աշխատանքները, մէջն ըլլալով այն բազմաթիւ նամակագրութիւնները ուղղուած Հայ Գրողներու, մտաւորականներու եւ Ամերիկեան պետական դէմքերու:  
Շնորհակալ եմ նաեւ որ ան նաեւ ստանձնեց յոբելինական ձեռնարկի հանդիսավարութիւնը որ կատարեց բարեխիղճ հոգատարութեամբ:  
Շնորհակալ եմ իր ազնիւ խօսքերուն եւ ինծի ընծայուած Մաշտոց Գոյէճի Դոկտորայի վկայականին եւ զեղատեսիլ իր բլաքին համար:  
Շնորհակալ եմ հայ մամուլին, «Նոր Կեանք» շաբաթաթերթին (որուն երկարամեայ աշխատակիցն եմ եւ մէկը թերթի մնայուն բնակիչներէն):  
Շնորհակալ եմ «Նոր Հայաստան» օրաթերթին, «Նոր Օր» եւ «Մասիս» շաբաթաթերթերուն որոնք լայն տեղ տուին իմ ձեռնարկին հետ կապուած թղթակցութեանց եւ յայտարարութեանց:  
Շնորհակալ եմ ձեռնարկին մասնակցող անձերուն: Իմ վաղեմի ընկեր՝ Եզնիկ Բալայեանին որ այնքան խորաթափանց եւ գրականագիտական վերլուծութեամբ ներկայացուց գրական գործերս եւ կեանքս:  
Շնորհակալ եմ Տիկ. Սէսիլ Քէշիշեանին որ զգալուն հասկացողութեամբ ընթերցեց իմ գրական գործերէս երկու կարեւոր էջեր:  
Շնորհակալ եմ զեղարուեստական բաժնին մասնակցող անուանի երգչուհի՝ Էլիզ Թաշճեանին, եւ Դոկտ. Լեւոն Աբրահամեանին իր դաշնակի ընկերակցութեան համար: Շնորհակալութիւն վարժ ջութակահար Մերուտան Մարգարեանին:  
Շնորհակալ եմ թոռնիկներուս՝ Թալին Փօսթաճեանին, Քրիստին, Պրիանա եւ Գարինա Բամպակեաններուն, իմ քերթուածներէս կատարած իրենց արտասանութեանց համար:  
Իմ մասնաւոր շնորհակալութիւններս ծանօթ կրթական մշակ, գրող եւ բազմաշնորհ մտաւորական Երուանդ Պապայեանին իր այնքան սրտագրաւ ուղերձին եւ արտայայտած ազնիւ զգացումներուն համար:  
Շնորհակալ եմ յոբելինական յուշամատենին մէջ իրենց գնահատագիրները գրող իմ գրչակից ընկերներուս, բարեկամներուս իրենց արտայայտած սրտի խօսքերուն համար:  
Շնորհակալ եմ յուշամատենը խմբագրող ընկերոջս՝ Սարգիս Մաճառեանին որ բարեխիղճ նուիրումով պատրաստեց այդ գեղեցիկ մատենը:  
Մեծ կարեւորութեամբ կը փափաքիմ իմ խորին շնորհակալութիւններս յայտնել, Միացեալ Նահանգաց Ամերիկայի նախագահ՝ Ճորճ Պուշին, նահանգային եւ միջնահանգային պետական կարեւոր դէմքերու որոնք մասնաւոր հուշակագիրով շնորհաւորական իրենց գնահատագրերը յղած էին ինծի միշտ Մաշտոց գոյէճի ճամբով:  
Շնորհակալ եմ նաեւ բոլոր անոնց որոնք նամակներով, հեռաձայներով եւ անձամբ իրենց շնորհաւորանքները յայտնեցին ինձ: Շնորհակալ եմ յոբելինական ձեռնարկին մասնակցողներուն եւ ներկայ եղողներուն համար:

**ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape® Keeping Californians Covered...

**The Power of Blue** SM

Health coverage for every household member and every household budget.

Affordable plans for the whole family.

The following plans are offered by Blue Cross of California (BCC): PPO Share 2500/1000/1000/500, EPO and HMO plans. The following plans are offered by BC Life & Health Insurance Company (BCL&H): Basic PPO 1000 (700B), Basic PPO 2500 (R41B), PPO Saver (NM3F), PPO Saver 5000 (FM2) and RightPlan PPO40 (F955/F48/F49) plans. BCC and BCL&H are independent licensees of the Blue Cross Association (BCA). The Blue Cross name and symbol are registered service marks of the BCA.

**ԱՆՐԱՄԵՇՏ Է**

1975-2005

**30th ANNIVERSARY**

**BEDROS SIAMANTO MARONIAN**

AUTHORIZED INDEPENDENT AGENT CA Insurance Lic#0494056

**818-500-9585** 805 East Broadway, Glendale, CA 91205

Blue Cross of California



# «ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ»ՈՒ ԲԱՅԼԱՐՇԱԲԸ ՀՈԼԻՎՈՒՏԻ «ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆ»ԻՆ ՄԷԶ

## ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

Moderator: Lee Ohanian, Department of Economics, UCLA

**Tax Potential vs. Tax Effort: Factors behind the Stubbornly Low Tax Collection in Armenia:** David Grigorian, International Monetary Fund and AIPRG  
**Remittances, Poverty, and Growth in Armenia:** Bryan Roberts, Department of Homeland Security and AIPRG  
**Financial Sector Development in Armenia: Problems and Challenges:** Nerses Yeritsyan, Central Bank of Armenia and AIPRG

Discussion

OPEN TO THE PUBLIC AT NO CHARGE.

ONE-DAY PARKING, \$8.00

STRUCTURE 2, HILGARD & WESTHOLME ENTRANCE TO UCLA

[Http://www.massisweekly.com](http://www.massisweekly.com)



# ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

## ՀԱՅԿՆԱԳԳԱՇՆԱՆ

Թեկնածու թիւերը մարդու յաջողութեան բանալիներէն մէկն է: Նպատակ հետապնդողներու՝ աթոռի մը, պաշտօնի մը կամ նոյնիսկ կեանքի ընկերոջ մը տիրանալու համար թեկնածու ըլլալը յաջողութեան սկիզբն է՝ իբրեւ հիմնական նախապայման: Բայց թեկնածութիւնն ալ իր սահմանափակումները ունի: Այսպէս, ամէն բանի կարելի է թեկնածու ըլլալ, բացի բարոյական արժանիքներէն եւ բնածին խելացութենէն, որոնց որքան ալ թեկնածու ներկայանանք ու մնանք՝ չենք կրնար տիրանալ անոնց:

Բարոյական արժանիքներէ գուրկ մարդոց համար արդարութիւն, ճշմարտութիւն, ազնուութիւն, ընկերասիրութիւն, երախտագիտութիւն եւ նման ...ութիւններ իմաստագուրկ բառեր են: Անոնք կը մտահոգուին միայն իրենց սեփական շահին ու գրաւելի աթոռին մասին, առանց դոյզն չափով մտահոգուելու բարոյական հասկացողութիւններով: Այդպիսիները դիւրաւ կրնան մոռնալ ոչ միայն վերոյիշեալ բարոյական հասկացողութիւնները, այլ նոյնիսկ նախկին բարեկամները, որոնք իրենց նեղ օրերուն նիւթապէս ու բարոյապէս օգնած էին իրենց: Որովհետեւ, այդպիսիներուն համար, սեփական շահն ու աթոռը ապահովելն յետոյ, մնացեալները՝ բարոյական սկզբունքներ ու բարեկամներ օգտագործելի տարրեր են միայն իրենց նպատակին հասնելու համար:

Այդպիսիները ազգային, ընկերային ու համամարդկային յարաբերութիւններու ծիրին մէջ պատեհապաշտութիւնը հիմնական քաղաքականութիւն կը նկատեն, որ ըստ իրենց դիւանագիտութիւն ու ճկունութիւն կը կոչուի: Պարագաներուն համաձայն ի վնաս սկզբունքներու եւ բարոյական հասկացողութեան քայլեր առնելը իրենց տեսակէտով խելացութիւն է: Այսպիսին, հարուստ ու դիրքերու տէր ծանօթներու շրջափոխները, խնկարկելը եւ անոնց սխալներուն իսկ աչք գոցելը իմաստութիւն եւ «ժամանակի հետ քայլ պահելու» կարողութիւն կը պահանջէ, ինչ որ իրենց յատուկ յատկութիւն կը նկատեն: Այս պատեհապաշտներուն համար նոյնքան բնական եւ խելացի գործ է նիւթական ու բարոյական դիրքեր շունեցող կամ գանոնք կորսնցուցած նախկին բարեկամները լքել՝ աւելի գորաւոր ու շահաբեր նորերուն շուրջ դառնալու համար: Շահի եւ աթոռի հետամուտ այս պատեհապաշտները շատ հանգիստ, առանց խղճահարութեան, վերադասաւորելով իրենց ընկերային յարաբերութիւնները, կը միանան դիրքերը գրաւած նորերուն, եթէ նոյնիսկ դիրքերը կորսնցուցածներուն մէջ կը գտնուին իրենց բարեկամներն ու բարերարները, որոնք անտեսումի ու նոյնիսկ հալածանքի կ'ենթարկուին անոնց կողմէ:

Ասոնք շահի եւ աթոռի յաւիտենական ակնկալութեամբ ապրող թեկնածուներ են, որոնք յաճախ ալ կը մնան թեկնածու՝ առանց հասնելու իրենց նպատակին: Որովհետեւ նոր դիրքերու հասած պաշտօնականները երբեմն բաւարար չափով իրատես են գնահատութեան ենթարկելու նոր թմբկահարներու շարունակը՝ կշռելու համար անոնց օգուտն եւ վնասը եւ թէ՛ որքանով անկեղծ ու անշահախնդիր են անոնք:

Եւ որպէսզի նոր «պոս»երուն աւելի հաճելի երեւան թեկնածուները՝ խնկարկումի եւ թմբկահարութեան իրենց ծառայութեան գուրահեռ հալածանքի արշաւ մըն ալ կը սկսին բոլոր անոնց դէմ, որոնք իրենց ծառայած «պոս»երուն չեն խնկարկեր, կամ նոյնիսկ անոնց տեսակէտները չբաժնելու յանդերձութիւնը կ'ունենան: Այս պատճառով ալ անոնք դուռ դուռ պատելով տարակարծիք եղողներուն մասին բերանացի «լուսաբանութիւններ» կու տան, թէ եւ ոչ միշտ յաջողութիւն գտնելով:

Վերջապէս, թեկնածուները ամէն միջոցի կը դիմեն՝ իրենց «պոս»երուն «աչքիդ վրայ յօնք կայ» ըսողները, կամ այլախոհ տարրերը լուրջութեան դատապարտելու համար, առանց գիտակցելու որ ազատ աշխարհի մէջ կ'ապրինք,


ուր թապուներ գոյութիւն չունին: Բայց ոչ մէկ ծառայութիւն նպատակին չի կրնար ծառայել եւ փրկարար դեր կատարել, եթէ անոր պէտք ունեցողներու արարքները արդար ու շիտակ չեն, եւ մանաւանդ, եթէ այդ ծառայութիւնները կը մատուցուին շահախնդիր եւ պատեհապաշտ թեկնածուներու կողմէ:

Որովհետեւ այդպիսիներուն ծառայութիւնը պայմանաւոր է՝ շահադիտական եւ աթոռամոլական հաշիւներու կապուած:


Թեկնածուները Աստուծոյ երկրպագելն իսկ հաշուով կը կատարեն անդիւր աշխարհին մէջ աթոռ մը ապահովելու ակնկալութեամբ...:

Է՛հ, ինչ երկնցնեմ, հաւանաբար դուք ալ հանդիպած էք նման տիպարներու, որոնք ամէն տեղ են: Ներկայ աշխարհին մէջ դժուար է «հնամենի» բարոյական սկզբունքներուն կառչած «ժամանակավրէյ» մարդիկ գտնել, բայց շատ են «արդիական» նոյնիսիները:

Այսպէ՛ս են աթոռի հետամուտ, աթոռ երազող յաւերժական թեկնածուները:



**Jessica Demirdjian**  
Realtor®



**Prudential**

California Realty  
9878 Hibert Street  
San Diego, CA. 92131  
Bus 858 653-6400 Fax 858 653-6440  
Cell 619 846-7738 jessicad@prusd.com



**WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT**  
"Where the East Meets the West"

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**  
**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**  
**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**



**CALL FOR RESERVATIONS**  
**TEL 626-281-1006 626-587-1048**  
**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**



**BELLY DANCING**

NAZO, VARTAN, AMIR & SINGER MUHAMMAD



# ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ...

## ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

(Շարունակում նախորդ թիվերէն)

Ծովակալ Իսակովի խաչմե-  
րուկում Աղեքսանդր Միսանիկ-  
եանն է կանգնած, վարդագոյն է  
հագել, քանդակագործ Արա Շի-  
րազն է նրան հայոց խոռովայն  
ընդերքից ժայթքած քարից արձ-  
նացրել: Ժպտալ է դրոշմել դէմքին,  
որ ժպտալ անցորդներին: Ինսու-  
նականների սկիզբներին, Ռուսա-  
կանի ու համայնավարութեան դէմ  
սանձագերծուած արշաւի ժամա-  
նակ, հայ «Խունկէյպի»ները ներկ  
էին թափել նրա վրայ: Ով ինչ  
ցանկանում է թող բարբառնի, ինչ  
գաղափարախօսութիւն էլ դաւա-  
նած լինի, ճակատագրի թէ նա-  
խահանգութեան թելադրանքների  
պայմանների բերումով որ ազգին  
էլ ծառայած լինի տաղանդաւոր  
հայ անհատը, նա հայ է, իր ցեղի  
փառքի լոյսն է վառել ուրիշ աշ-  
խարհներ: Յարերի ու կարմիր  
ռուսների հայ գործակալների, մա-  
րաջախտնտների, ծովայինների,  
նրանց «Դիկտատոր» ու «Փոխար-  
քայ» Լորիս Մելիքովի, նրանց  
երկրի բազում պետական գործիչ-  
ների ու գիտնականների, Սուլ-  
թանների գանձատների հայ վա-  
րիչների, Բիւզանդիոնի բանակնե-  
րի գործակալների ու նրա գահին  
բազմած բազում կայսրերի, Նափո-  
լէոնի թիկնապահների, էլ բազում  
օտար երկրներում ծառայած պե-  
տական գործիչների ու գիտնա-  
կանների անունները կարգալով ինչ-  
քան են մեր հոգիները հպարտու-  
թեան շունչով յորդում, թէկուզ  
ափսոս որ իրենց ազգին ծառայած  
չէին եղել:

Աղեքսանդր Միսանիկեան-  
Մարտունի, Նոր Նախիջևանում  
էր իր առաջին ճիշով աւետել  
գալուստը մի իմաստուն հայ գաւա-  
կի, որ ցարերի ու սովետների  
երկրում պիտի տիրանար պետա-  
կան ու ռազմական բարձր պաշտօն-  
ների: Ռուս Յարուհի՝ Եկատերինէի  
հրովարտակով Լորիսի երկրամասի  
գաղթական հայերի մի մասին այդ  
վայրում էին բնակեցրել: Անյտեղ  
են ծնուել նաև Միքայէլ Նալ-  
բանդեանը, Գամար Գաթիպան: Եւ  
վերջապէս արեւի ծիածանով ցօղ-  
ուած հայոց լեռները, դաշտերը,  
հայոց իմաստուններին իր պա-  
տաններին փռած Սարեան Մար-  
տիրոսը եւ դեռ բազում հայորդի-  
ներ, որոնք իրենց ցեղի փառքին  
արեւների կարմիր պսակներ ճա-  
ռագեցին: Եւրոպայի ազգերը եր-  
կու իմբերի բաժանուած կատաղի  
մոլուցքով գարկում էին իրար: Ինք  
էլ զինուոր եղաւ եւ Ռուսաստանի  
արեւմուտքում մասնակցեց մար-  
տերին: 1917 թուականին, այդ  
երկրում Բոլշեւիկների պետական  
հարուածից յետոյ էլ շարունակեց  
կռիւր եւ հասարակ գիտնոր մար-  
տիկից դարձաւ ամբողջ արեւմտ-  
եան ռազմաճակատի գլխաւոր հրա-  
մանատարը: Եւ իր հրամանատարու-  
թեամբ էր, որ սովետների նորաս-  
տեղծ բանակը Լվով քաղաքի մօտ  
իր առաջին յաղթանակն էր տօնել  
գերմանացիների դէմ եւ այդ օրը՝  
1918 թուականի Փետրուարի 23ը  
հռչակուել էր նորաստեղծ կարմիր  
Բանակի ծննդեան օր: Այդ ինքն էլ  
Բելոռուսիայի անկախութեան  
հռչակողը եւ առաջին նախագահը,  
որի բնակիչները «Մեր նախագա-  
հը» ասելով պիտի ողբային նրա  
եղերական մահը:

1921 թուականի Յունուարին  
Միսանիկեանը եկաւ Հայաստան եւ

նշանակուեց կառավարութեան նա-  
խագահ ու ռազմական նախարար:  
Հաւաստում են որ նա հայոց երկի-  
րը կառավարել էր խաղաղ ու  
կատարել յիշատակութեան արժա-  
նի բազում գործեր: Նրա նախագա-  
հութեամբ էր, որ Անդրկովկասի  
Բոլշեւիկների երկրային կոմիտէն,  
1921 թուականի Յունուարի 23-ին  
նրա ստեղծած մեծամասնութեամբ քու-  
հարկել էր Ղարաբաղը համարելու  
Հայաստանի հանրապետութեան  
մաս: Յաջորդ օրը, ոճրագործ Ստա-  
լինը կարգադրել էր չեղեալ յայ-  
տարարել ընդունուած որոշումը,  
աւելացնելով որ քուհարկութեամբ  
տարածքների հարց չեն որոշում:  
Հրամայել էր այն համարել՝ Մա-  
րատանի ու Աշուհանների երկրնե-  
րին տիրակալած թաթար-սելճուք-  
ների նոր յորինած Ատրպէյճան  
պետութեան կազմում: Յանուն նոր  
գաղափարախօսութեան, միջազգա-  
յին չզիտեմ ինչերին, արդօք մա-  
րել էր պետական ու կուսակցական  
բարձր դիրքեր գրաւած հայերի  
արիական ցեղին սրտի ոգին, որ  
չէին համարձակել դիմակայել ոչ  
միայն այդ որոշմանը, այլ նաեւ ոչ  
էլ Մոսկովում նոյն թուականի Մարտ  
16ին կնքուած պայմանագրին: Այն-  
տեղ, առանց հայերի ներկայացու-  
ցիչների մասնակցութեան, Հայաս-  
տանի հանրապետութեան տարածք-  
ները տուին թուրքին, հայկական  
Նախիջևանը գիւնեցին թաթարնե-  
րին: Չէ, ափսոս, միայն կարմիր  
հայերը հաւատացին որ ազգային  
հարցը լուծուած է եւ սահմաններ  
չկան նրանց միջեւ, հապա հիմա  
տեսէք, այդ ազգերը ինչպէս են  
կուռում սահմանների համար, ինչ-  
պէս են բարբարոս թաթարները ու  
թուրքերը խաչեր սպանում, քան-  
դում վանքեր, շարականների աղօթ-  
քով օծուած խնկաբոյր խաչքա-  
րերով տներ պատում, գերեզման-  
ներ պղծում, ջարդում յուշարձան  
խաչերը, այն նետում Մայր Արաք-  
սի ալիքներին, նրանց ցաւի  
մրմունջներին այն ինչպէս չի խեն-  
թացել...: Եւ մեծ վարպետ Աւետի-  
քը արտասահմանից իր հայաս-  
տանեան ընկերոջը պիտի գրէր  
«Սոցիալիզմը դեռ մարդկութեա-  
նը օգուտ չտուած մեր տունը  
քանդեց»: Կողոպտեցին հայոց եր-  
կիրը, սեղմեցին մեզ մեր երկնային  
լեռներին, պոկեցին մեր քարէ սիրտ  
լեռն Արարատը, որ ամէն օր  
կարօտով մաշենք մեր հոգին եւ  
երբ է որ պիտ բարձրանանք նրա  
գագաթին, որ թքեն թուրքի ու  
հիւսիսի ճակատներին: Նա էր, որ  
Արեւմտեան Հայաստանի լեռնա-  
կան տարագիրներ բնակեցրել էր  
Գեղամայ ծովի լեռնոտ ափերին եւ  
ի երախտագիտութիւն՝ իրենց նոր  
չէնքը կոչել էին նրա մարտական  
անունով «Մարտունի» ական: Կար-  
միր հրէշի դաւադրութեամբ 1925  
թուականի Մարտ 22ին, Թբիլիսի  
օդակայանում, սաւառնակի վթա-  
րի հետեւանքով զոհուել է յիշատա-  
կութեան արժանի այս մեծ փառա-  
ւոր հայը:

Ինքնաշարժը շարունակում է  
դանդաղ սահել, ձախ կողմում  
փուռել են ծառերը, որոնց ցած  
իջած սաղարթները կանաչ համ-  
բոյր էին շողում երկար նստարան-  
ներին, իրենց պաղ շունչն էին  
փուռում հայոց ընդերքից քաղուած  
կարմիր խառամի շերտով ծածկ-  
ուած ճեմուղիներին, որ մանուկնե-  
րը քայլէին նրանց վրայով, որ  
հայոց երկրի հողի հուրը ծորար  
նրանց արտիկներին: Կրածոյլ պա-  
տերով ու մետաղեայ ճաղերով շրջա-

փակուած պարտէզ-գբօսայգի է, որ-  
տանի մանուկների հոգիներին  
զուարթութիւն ցօղելու վայր, որն  
անուանած էին եղել «Կիրովի Ան-  
ուան Մանկան Զբօսայգի»: Այս ինչ  
օտարամոլութեան, սովետամոլու-  
թեան մոլուցքով էին տարուած  
եղել «Կարմիր» աթոռներին բազ-  
մած հայերը, իսկ ինչու այդ պար-  
տէզ-այգին չէին կոչել թուամեա-  
նի, Աղայեանի, Խնկո-Ապերի անուն-  
ներով, որոնք իրենց հոգիների  
բարութեամբ ինչքան մանկական  
պատումներ ու հէքիաթներ էին  
հիւսել ու այն ճամբել մանուկների  
անուշիկ հոգիներին: Հիմա այդ  
բոլոր «Բոլշեւիկներին» վռնտել  
են իրենց տներ... է՛ք, արմէն-հայե-  
րը հիւրընկալութեան աստուած  
էին արարած եղել, նրանց չեն  
վռնտել, ճամբել էին իրենց տներ,  
Սասունցի Դաւիթի նման յորդորել  
էին խաղաղութեամբ գնալ... նրանց  
հաւատամքի փոխարէն հայրը իր  
ցեղի արիական ոգին է այժմ բերել  
իր երկիրը: Մտանք մանուկների  
պարտէզ-այգին:

Երեւանեան միջօրէի տաքն  
էր, նստարաններին պարման-պար-  
մանուհիներ իրար կողքի խիստ  
մօտիկ նստած, հայեացքներն էին  
իրարու հիւսել, նրանց ակներից  
սիրոյ հուրն էր ժայթքում, այնտե-  
ղից սիրոյ կայծեր էին շանթում՝  
իրենց հոգիների ատրուշաններում  
կեանքի կրակներ բորբոքելու: Պար-  
տէզ-այգի՝ որտեղ բնութեան  
հրայրքն է պոռթկում, որտեղ ծաղ-  
կունքի կեանք է ժայթքում: Արե-  
ւային արշալոյսի մանուկները վա-  
զում էին պարտէզում, կարծես  
իրենց աւերուած հէքիաթային  
դրախտիկ աշխարհի պարտէզում  
լինէին: Մի պահ խորունկ նայեցի  
նրանց լուսնեակ դէմքերին, արե-  
ւային հրեշտակային աշուկներին,  
ժպտաց իմ տարեց հոգին, ժպտաց  
նրանց, ով իմանայ գալիքի որ  
արիական հանձարով էի հրճուում:  
Մանուկների այս պարտէզ-  
այգին վայրենացած չէ ինչպէս  
միւս գբօսայգիները: Ընդարձակ  
բացատ կայ այնտեղ, որի շուրջ-  
բոլորը մանուկներն են երգում ու  
պարում: Չուսթութիւն է հոսում  
նրանց դէմքերից, նրանց ուրախ

քրքիջներով է ողողուել պարտէզը,  
նրանց երգերը զեփուռ դարձած  
օրօրում էին ծառերի կանաչ սա-  
ղարթները, որոնց վրայ իջած փե-  
րիները մեղմիկ սօսափում էին:  
Մանուկների հոգիները խաթար-  
ուած չեն մարդկային արատներով,  
նրանք դրախտային լոյսի բոյրով  
են ցօղուած, օ՛հ, սակայն պարմա-  
նուհիներ դարձած, իրենց նախա-  
մայր Եւայի նման չգայթակղեն ու  
չգայթակղեցնեն պարմանների հո-  
գիները...:

Հնաբնակ Երեւանցիները  
պատմում էին, որ Մանկական Այ-  
գու վայրը նախկինում կոչուել է  
«Ղանթար» իրենց շէնի շուկան է  
եղել այն, կոպեկներով էին գնել  
ցորեն, բանջարեղէն, իրենց պար-  
տէզներում հասունացած ծիածան  
մրգեր, իսկ հիմա միաւոր «լու-  
մա»յով կամ էլ միաւոր «դրամ»ով  
ոչինչ կարող ես գնել: Որպէս  
առասպել պատմում էին, որ Գեղա-  
մա ծովի խոտով փաթաթուած  
թարմ ձուկն էին բերել Ղանթար,  
Իշխան, ձկների արքայ՝ Իշխան էին  
կոչել այն, նրա իրանից ոսկի ու  
արծաթ շողեր են ժայթքում, կար-  
ծես ծովի վրայ իջած աստղերն էին  
քաղել: Միայն բնական հոսքով էին  
դուրս յորդել ծովի ջրերը, իշխան-  
ները իրենց համար բարենպաստ  
պայմաններում առատօրէն բազ-  
մացել էին, պատմում էին որ Նոր  
Բայազետի բնակիչները գետակնե-  
րից ջուր վերցնելու ժամանակ  
Իշխանները ջրի հետ սափորների  
մէջ էին վազել: Խաթարեցին ծովը,  
նրա ջրերը տարան որ թափանիւ-  
ներ պտտացնեն, Իշխանին զրկեցին  
բազմանալու պայմաններից, այն  
ին որ էլ մնացել է գողանում են, որ  
յգիացածները իրենց սիրեկաննե-  
րի հետ անկուշտ լափեն:

Ինքնաշարժը հատում է «Շա-  
հումեան» այս կարճ փողոցը «Մով-  
սէս Խորենացի» փողոցի հետ, որ  
նախկինում «Կարլ Մարքսի» անու-  
նով էին յորջորջել: Վռնտել են եւ  
նրան մինչեւ Քուպա, Հիւսիս Գո-  
րէս, չինացիները երկիր ու նրա  
փոխարէն բերել մեր արմենական  
ազգի պատմութեան հայր՝ Մովսէս

Շաքր էջ 17

**«ՆՈՎՆԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ»**

Նաբակի բարեկամ, բողոքիկ է ճանաչած  
կինոբնագրի ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅՅԱՆԻ «ՆՈՎՆԱՆՆԵՍ  
ՇԻՐԱԶ» լիամետրաժ վավերագրական կինոնկարի  
փեսակավառակը (DVD) (պրոդյուսեր՝ ԿԼԻՄ ՃԻՏՅԱՆ,  
նովալադրեր՝ «ՆԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» Գրական-  
Մշակութային հանդես, «ՆԱՅԿ» վավերագրական  
ֆիլմերի կինոստուդիա):

Արժեքն է՝ \$20 (2 փեսակավառակի առաքման  
դեպքում՝ \$50):

Ապրիլյան ոգեկոչման այս օրերին եղեռնաշունչ բանաստեղծի սրբազան պատմական ողջ  
գործունէությանը նվիրված միակ լիամետրաժ վավերագրական այս փեսակավառակը  
լավագոյն նվերը կարող է լինել հայրենասեր Ձեր բարեկամներին:



**HOVHANNES SHIRAZ**  
DOCUMENTARY  
PRODUCTION PRODUCED BY LEVON MKRTCHYAN  
DIRECTOR LEVON MKRTCHYAN

Տեսակավառակը կարող եք  
ձեռք բերել միայն  
**«ՆԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ»**  
հանդեսի խմբագրապահը:  
Հասցեն՝ 400 S. Glendale Ave., # N

Մանրամասն տեղեկությունների  
համար խնդրում ենք զանգահարել՝  
**(818) 240-0600:**

Շնորհակալությամբ՝ «ՆԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ»



# ԸՆԿԵՐ ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

## ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Մարդ արարածը երբ կը ծնի, արդեօ՞ք իր նկարագիրն ու արժանիքները իր հետ կը ծնին, թէ՞ ժամանակի ընթացքին կ'ընթացուին: Եւ եթէ մարդս կազմուած նկարագրով կը ծնի, կեանքի պայմանները արդեօ՞ք կրնան փոխել նկարագիրը:

Ընկ. Գրիգոր Լազինեանի մասնունան առթիւ, այս հարցումներն են որ կը գբադեցնեն իմ միտքը: Ու իր մասին իմ լսածներէս, ինչպէս նաեւ իր հետ ունեցած անձնական փորձառութիւններէն դատելով, կու գամ այն եզրակացութեան, որ Աստուած ամէն մէկուս համար գրած է

եղած է:

1924ին ընտանեօք փոխադրուած ըլլալով Լիբանան, կը սկսի յաճախել նորաբաց Սահակեան վարժարանը ու 7 տարեկանին մաս կը կազմէ քէմբի ֆութպոլի մանկական խումբին, իր ճակատագիրը կապելով ֆութպոլին եւ իր սիրած միութեան՝ Հ.Մ.Մ.ին, որ կը դառնայ կիրակէտը իր աշխարհին: 1939-1953 ան հանդէս կու գայ Հ.Մ.Մ.ի ֆութպոլի Ա. խումբէն, 1945ին շահելով Լիբանանի ախոյեանութիւնն ու բաժակը: 1953ին, ոտքէն վիրաւորուելուն պատճառաւ, կը ստիպուի հանգստեան կոչել մարզիկի շապիկը, 2 տարի չանցած հանդէս գալու համար... իրաւարա-



Ընկ. Գրիգոր Լազինեան Հ.Մ.Մ.ի եւ կուսակցական ղեկավար իր ընկերներուն հետ

ճակատագիր մը, գոր կարելի չէ փոխել:

15 Օգոստոս 1920ին, էփեբեկի մէջ, Յակոբ եւ Սաթենիկ Լազինեաններու նորածին գաւակ, Գրիգորի ճակատագրի դիմաց Աստուած գծած պտքէ ըլլար «Նուիրեալ միութեանական, անշահախնդիր հայրենասէր մարդ, տիպար ամուսին եւ հայր, գորովագութ մեծ հայր»: Եւ ընկ. Գրիգորը իր ամբողջ կեանքի ընթացքին այդ գրութեան փաստացի մարմնաւորումը

րի շապիկով: Նոյն տարին, 1955ին, Լիբանանի Մագրաա ֆութպոլի խումբին հետ, մարզական առաքելութեամբ կ'այցելէ Հայաստան: 1959ին ան արդէն միջազգային կարգի իրաւարար է եւ կը վարէ միջերկրականեան խաղերու բացման մրցումը Թունուզի եւ Մարտքի միջեւ: Այս հանգամանքով ան կ'այցելէ գանազան երկիրներ, ինչպէս Սուրիա, Իրաք, Քուէյթ, Իրան եւ այլն ղեկավարելով կարեւոր մրցումներ:



Հ.Մ.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ. խառն խումբը ընդդէմ Մոսկուայի զինուորական «Փսաս» խումբին դէմ 1953

1971ին, Հ.Մ.Մ.ի հիմնադրութեան 50-ամեակի տօնակատարութեան ընթացքին, ղեկավարելէ ետք Հ.Մ.Մ.-հայրենի Արարատ մրցման առաջին վայրկեանները, հանգստեան կը կոչէ իրաւարարի սուլիչն ու շապիկը... վերցնելու համար Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնէն ներս Իրաւարարներու Խորհուրդի պատասխանատու անդամի պաշտօնը, գոր կը վարէ մինչեւ իր Ամերիկա հաստատուիլը 1989ին: Իսկ հոս հաստատուելէ ետք ալ չի հեռանար ֆութպոլէն եւ Հ.Մ.Մ.էն, մաս կազմելով Հ.Մ.Մ.ի վեթերաններու վարչութեան:

1953ին որպէս մարզիկ ֆութպոլի կեանքէն դադրելուն յաջորդ տարին, 1954ին կը սկսի ամուսնական կեանք մը Հռիփսիմէ Փագեանի հետ: Կը բախտաւորուին 3 մանչ եւ մէկ աղջիկ գաւակներով՝ Կարապետ, Լեւոն, Յովիկ եւ Սեդա: Բնականաբար տղաքը կը հետեւին իրենց հօր օրինակին, դառնալով ֆութպոլիստներ: Եթէ այդ օրերուն Լիբանանի մէջ ֆութպոլի աղջկանց խումբ ըլլար, վատահաբար Սեդան ալ անմասն պիտի չմնար անկէ:

Որպէս ամուսին եւ ընտանիքի հայր, ու ապա որպէս 8 թոռնիկներու մեծ հայր, պիտի բացաչայտուէր Ընկ. Գրիգորի նկարագրի մէկ այլ երեսն ալ, որ ֆութպոլիստի չարքա տիպարէն բոլորովին տարբեր էր:

Այդ մէկը ազնիւ եւ նուրբ,

գթառատ ու գորովալից, հաւատարիմ ու աստուածավախ մարդու երեսն էր, որ մանկութեան օրերուն դրսեւորուած էր որպէս վրանաքաղաքի եկեղեցուց դպիր, իսկ երիտասարդ օրերուն որպէս Արսէն Կիտուրի առաջարկութեամբ կազմուած եւ Օննիկ Ասատուրեանի ղեկավարութեամբ գործող «Գողթան» երգչախումբի երգիչ անդամ: Երբ իրեն հարց կու տայինք թէ ինչպէ՞ս դպիր ըլլալը, երգչախումբի անդամ ըլլալը եւ ֆութպոլիստ ըլլալը իրար հետ կը հաշտեցնէր, ան այդ բոլորը կը հաւաքէր մէկ հասարակ յայտարարի տակ՝ հայապահպանման պարտականութեան գիտակցութեան ծիրին մէջ: Եկեղեցի, մշակույթ, մարզական միութիւն, բոլորը միասին պէտքէ ծառայէին հայապահպանման սուրբ գործին: Եւ հոս ի յայտ կու գային հայրենասէր, անշահախնդիր, հեռատես մարդու իր յատկութիւնները: Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժուարին օրերուն իր այդ յատկութիւններն էին, որ զինք պատասխանատու դիրքերու կը կոչէին, որպէս հաշտեցման ու համագործակցութեան ջատագով անձ, որպէս գանազան կողմերու վստահութիւնը շահած անշահախնդիր անձ:

Մէկ այլ յատկութիւն, որ ընկ. Լազինեանը սիրելի կը դարձնէր բոլորիս, այն թիկունքն ու քաջաբեր էր:

Շաբ.ը էջ 18

## ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍԲԸ

Հայ Մարմնամարզական Միութիւնը սուգի մէջ է այսօր: Ոչ եւս է իր վաստակաւոր անդամներէն եւ ապրող հազուագիւտ Հ.Մ.Մ.ական «կողնիներէն» ընկ. Գրիգոր Լազինեանը:

Իմացած էինք իր հիւանդ ըլլալը, սակայն բոլորովին անապասելի էր այդքան վաղահաս լսել իր մահուան փոթը, որ մեզ անակնկալի բերաւ: Երբեք պիտի չուզէի դամբանական խօսողը ըլլալ գաղափարապաշտ եւ հաւատաւոր Հ.Մ.Մ.ական, իմ վաղեմի եւ երկար տարիներու անկեղծ գործակից ընկերոջս մահուան առթիւ: Սակայն



Ընկ. Տիգրան Սարաֆեան շքանշան մը կը զետեղէ Ընկ. Գրիգոր Լազինեանի լամբակին

Շաբ.ը էջ 18

## ԻՄ ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ՄԵԾ ԶԱՅՐՍ

### ՍՕՍԻ ԼԱԶԻՆԵԱՆ

Ինչպէ՞ս հրաժեշտ տամ քեզի: Տակաւին երէկ էր, որ հիւանդ անկողնիդ մէջէն կը ժպտայիր: Տակաւին կը փորձէիր կարելիդ ընել, որ մեզ ուրախ պահես: Երբ գիտնալով, առողջական վիճակիդ ծանրութիւնը, փառք Աստուծոյ լաւ եմ կ'ըսէիր: Մեծ մօրս հետ կազմած ընտանեկան ջերմ բոցնդ, բարեկիրթ եւ քաղաքավար գաւակներ մեծցուցած ոճդ, գոհողութիւններդ, աշխատասիրութիւնդ, զարմիկներուս, եղբօրս եւ ինձի ցոյց տուած գուրգուրանքդ ինչպէ՞ս կարելի է չգնահատել: Հայրենասէր, ազգասէր, մարդասէր՝ բառին ամբողջ առումով:

Դպրոցի մեր ճամբուն վրայ, միշտ դաստիարակչական խօսք մը ունէիր մեզի փոխանցելու: Պարտաճանաչօրէն կու գայիր որ քու ինքնաշարժով մեզի դպրոց տանիս: Եղբայրս եւ ես երբեմն մանկական անհոգ մտայնութեամբ առաւօտեան անուշ քունը կը վայելէինք... գիտնալով որ դուն պարտաճանաչ ես եւ մեզ դպրոցէն պիտի չուշացնես: Յանկարծ քու այդքան հանդարտ ձայնդ մեզ կը զգաստացնէր... դուրս կը ցատկէինք մեր անկողնիէն եւ կ'աճապարէինք դպրոց երթալ: Հիմա, կը մտածեմ պարտաճանաչ աշակերտը դո՞ւն էիր թէ մենք:

Սիրելի մեծ հայր, քու ազգանուէր գործունէութեամբդ հպարտ եղած եմ: Քու թոռնիկդ ըլլալս ճակատաբաց կը յայտարարեմ, իսկ եղբայրս իր Գրիգոր անունով պիտի յաւերժացնէ քու յիշատակդ:

Այսօր, Ապրիլ 24ի նախօրեակին վերէն կը դիտես մեզ բոլորս: Հպարտ էիր եւ այդպէս մնայ: Քեզի տրուած իրաւարարի պաշտօնը արդարամտութիւն կը նշանակէ: Պարկեշտ եւ արդարամիտ էիր:

Այսօր, դժուար է քեզմէ բաժնուիլ: Մեր քեզի տուած խոստումները ճշդօրէն պիտի կատարենք:

Կը համբուրեմ սառած ձեռքերդ:

Երթաս բարով:



### ԱՊՐԻԼ 24-Ը ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻ ՏԱԿ

Շարունակում է 5-ԷՋ

նիսկ ամենամարդասիրական զգացումների վրայ (մանաւանդ մի ցեղի վրայ, որ ելնելով Միջին Ասիայից եւ յենուելով միայն իր կռուելու-աւերելու բնագրի վրայ, արշաւել եւ գրաւել է ուրիշ քաղաքակիրթ երկրներ եւ հասել նոյնիսկ մինչեւ Կենտրոնական Եւրոպա եւ ի մեծ դժբախտութիւն հայ ժողովրդի՝ 1915ին թուրք զանգուռածներն էլ փոխանակ բողոքելու իրենց ղեկավարների արարքների դէմ, լծուած են նրանց կառքին, հայ ժողովրդի բնաջնջումը իրագործելու համար: Հեռու չէր թանք, նոյն թուականութեամբ միջնորդութեամբ միջին կոյր հնազանդութիւնը ցոյց չտուեցին շատ աւելի քաղաքակիրթ գերմանները Հիդլերի դեկավարութեամբ: Քանի՞ տոկոսը 80 միլիոննոց գերման ժողովրդից բողոքեց Հիդլերի վայրագութիւնների եւ ցեղասպանութեան դէմ: (Հիդլերի բռնապետութիւնը ամբարշտուելուց յետոյ անշան տոկոսը): Ի դիմաց թուրք կառավարութեան եւ թուրք զանգուռածների հոգե-բարոյական, յուզական միասնականութեան դժբախտաբար, արեւմտահայ զանգուռածների եւ ի ղեկավարութեան մէջ, բացի 5-6 կէտից, ուր հիւանալի եւ հայ ժողովրդին պատիւ բերող հերոսամարտեր տեղի ունեցան (Վան, Շատախ, Մուսա Լեռ, Սասուն (մասամբ Մուշ), Ուրֆա, Շապին Գարահիսար) չիրագործուեց այդ հոգեբարոյական միասնականութիւնը: Այդ հոգե-բարոյական միասնականութիւնը իրագործուեց 3 տարի յետոյ Սարդարապատում, Բաշ-Ապարանում եւ Ղարաքիլիսայում, որ յանգեցրեց թուրքական բանակի պարտութեան եւ հայ ժողովրդի մեծ յաղթանակին ու անկախութեան: Ահա հոգե-բարոյական ազդակի ճակատագրական դերը ժողովուրդների կեանքում եւ պատմութեան մէջ: Ֆրանց Վերֆէլի «Մուսա Լեռան 40 օրերը» վէպը, որ միջանկեալ սանք՝ կերպարների հոգեբանութեան տեսակէտից բարձր որակի մի գիրք է, հիւանալի կերպով ցուցադրում է ղեկավարութեան եւ զանգուռածների միջեւ ստեղծուած հոգեբարոյական սերտ կապի ճակատագրական դերը, մանաւանդ սուր եւ օրհասական հակամարտութիւնների ընթացքում: Միթէ՞ միեւնոյն երեւոյթի ականատեսը չեղանք վերջին տարիներին Արցախում:

Երբ մէկ անգամ պարսիկ ուսանողները հետ խօսում էի իրանի Սահմանադրական յեղափոխութեան առաջնորդներից Եփրեմի սիրագործութիւնների մասին, թէ ինչպէս մի քանի տասնեակ հայ եւ պարսիկ քաջերով Ռաշտը, Անգալին, Ղազուինը եւ մօտ երեք հարիւր (300) քաջերով Թեհրանը գրաւեց եւ վերջ տուեց միապետական վարչաձեւին, ուսանողներից մէկը հետաքրքիր հարց տուեց.

«Ի՞նչ է պատճառը, որ որոշ ժամանակներում այդպիսի քաջեր են առաջ գալիս, իսկ ուրիշ ժամանակներում ոչ»:

Իմ պատասխանը եւ տեսակէտն այդ մարզում հետեւեալն էր եւ է.

Պատմութեան մէջ կարեւոր դեր խաղացող անհատների երեւան գալը կապ ունի մի շարք ազդակների հետ, որոնցից կարեւորագոյնը «յեղափոխական միջնորդութեան»:

Լաւագոյն փաստը այս կապակցութեամբ հետեւեալն է՝ 19րդ դարի վերջին տասնեակից մինչեւ 1920ը, այսինքն ընդամէնը 30 տարուայ ընթացքում, հայ ժողովուրդը ծնունդ է աչքան թուով հերոսներ, որ չէր ծնել Օսմանեան իշխանութիւնը Հայաստանում հաստատուելու մինչ այդ թուականը: (Այսինքն մօտ 5-6 հարիւր տարուայ ընթացքում): Անունների շարանը երկար է, թուեմք միայն մի քանիսը՝ Սերոբ Աղբիւր, Գէորգ Չառուշ, Անդրանիկ, Եփրեմ, Փարամազ, Քեռի, Դրօ, Նիկոլ Դուսան, Նժդէհ: Այս անուններից իւրաքանչիւրը իրաւամբ մի մի Սասունցի Դաւիթ է: Արդեօք հրաշքի չի՞ նմանում: Այսքան հերոս այսքան կարճ ժամանակուայ ընթացքում: Այո, հրաշքի է նմանում, եթէ նկատի չառնենք այն տարիների հոգեբանական պայմանները եւ հանգամանքները:

Չաստուածների եւ հերոսների ծնունդը հանգիստ եւ խաղաղ պայմանների մէջ չի կատարուում: Նկատի առէք հայ դիցաբանութեան Վահագնի ծնունդը: Երկիր եւ երկինք պիտի երկնեն, տարբերը խառնուեն իրար, որպէսզի չաստուածներ եւ հերոսներ ծնուեն:

Յեղափոխականօրէն չի կացած միջնորդը, յեղափոխական կազմակերպութիւնները ստեղծում են քաջարի ղեկավարներ եւ քաջարի մարտիկներ: Այդ կազմակերպութիւնները եւ ընդհանուր առմամբ յեղափոխական դպրոցը վառ է պահում նաեւ յեղափոխութեան քուրան:

Նկատի առնենք նաեւ այն պարագան, որ հոգեկան յուզական վիճակները խիստ վարակիչ են (դա, հոգեբանօրէն, լրիւ օրինաչափ է) երբ մի հաւաքականութեան մէջ կան մի քանի ընտրեալ քաջեր, այդ քաջութիւնից վարակում են նաեւ վարանողները, տատանողները, երբորն անձինք:

Վախը, խուճապը, յուսահատութիւնը նոյնպէս վարակիչ են դժբախտաբար. այդ պատճառով յեղափոխական բանակը անմիջապէս հեռացնում, չէզոքացնում կամ պատժում է այդպիսի անձանց):

1915 բոլոր իրադարձութիւնները՝ կոտորած կամ հերոսամարտ լաւագոյն, համոզիչ եւ հաստատուն փաստերն են այս իրողութեան:

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ արդեօք, մեր նոր սերնդին (մանուկներին եւ պատանիներին) փոխանցելով 1915ի Մեծ Եղեռնի եղելութիւնը եւ պատգամները, չէ՞նք վնասում նրանց անհատականութեան կազմաւորման եւ ձեւաւորման բնականոն ընթացքին:

Այս հարցի պատասխանը միանշանակ է՝ ո՛չ եւ ո՛չ:

Ճիշդ հակառակը՝ այդպիսով օգնում ենք հայ անհատի ճիշդ եւ բնականոն կազմակերպման գործին:

Մեր տասնեակ տարիների հոգեբանական-դաստիարակչական փորձը (յատկապէս յոյգերի բնագաւառում) ցոյց է տուել որ երեխաները, պատանիները ընդհանուր առմամբ աւելի ճիշդ եւ աւելի յաջող են ընկալում, իւրացնում մահուան գաղափարը-եղելութիւնը եւ աւելի թեթեւ եւ շատ աւելի քիչ traumatisme-ով են անցկացնում դրան կապուող վիշտը, քան չափահասը: Խիստ հազուադէպ եւ բացառիկ պարագաներում նկատուում են որոշ չափազանց գերզգայուն, հիստերիկ երեխաներ որոնց հա-

մար հոգեբանի « կողմից յատուկ եւ առանձին ռեժիմ է վերապահուած (Միեւնոյն կարելի է ասել նաեւ չափահասի համար, եթէ նման պայմաններում է գտնուում):

Այդ մասին յստակ տուեալներ եւ նկարագրութիւններ կան հոգեբանութեան, դաստիարակութեան որեւէ ձեռնարկում, եւ թող անհամեստութիւն չհամարուի ասելու իմ վերջերս պարսկերէն լոյս տեսած թէ՛ «Մանուկի հոգեբանութիւն» եւ թէ՛ «Դեռահասի-պատանու հոգեբանութիւն» դասագրքերում:

#### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով Եղեռնի հոգեբանական կողմը, էլ աւելի լաւ եւ յաջող կարելի է շարունակել մեր ներկայ բախտորոշ պայքարը, Հայաստանի անկախութիւնը պահպանելու, ամրապնդելու, կատարելագործելու եւ Հայ Դատի գործը էլ աւելի առաջ տանելու համար բոլոր մարզերում:

2. Ուսումնասիրելով եւ գործադրելով հոգեբանական որոշ սկզբունքներ, աւելի լաւ ու յաջող կարելի է գործի լծել եւ լարել մեր բոլոր ուժերը, թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Սփիւռքում եւ յատկապէս զինուորագրել սփիւռքահայ երիտասարդութեան ու պատանեկութեան հայկական խնդիրը լուծելու նպատակով:

3. Պատմական դէմքերը եւ դէպքերը վերլուծելու ընթացքում, բացի քաղաքական, տնտեսական, ազգային, հասարակական, կրօնաբարոյագիտական մտեցումներից, խիստ կարեւոր եւ անհրաժեշտ է ունենալ նաեւ հոգեբանական մտեցում:

Ուրեմն կարելի է յայտարարել եւ իրագործել հետեւեալ նշանաբանը. ուսումնասիրենք ընդհանուր եւ հայոց պատմութիւնը, նաեւ հոգեբանական լոյսի տակ:

Դա կը լինի անպայման ի շահ հայ ժողովրդի, դրացի բարեկամ տարածաշրջանի ժողովուրդների եւ մեր արդար դատի, մանաւանդ ներկայ բախտորոշ եւ ճակատագրական ժամանակահատուածում:

#### ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ապրիլ 24-ի եւ այդ գաղափարի ու պատգամի հայ նոր սերնդին փոխանցելու մասին, երբեմն որոշ ծնողներ եւ դաստիարակներ, շատ աւելի շեշտակի եւ յստակ հարցապնդում են՝

Արդեօք, այդպէսով, հոգեբանական բարոյց չի՞ ստեղծուում մեր մանուկների եւ պատանիների ուղեղում:

Այս հարցի պատասխանն է հետեւեալը:

Ինչու չէ, հոգեբանական բարոյց (complex) է ստեղծուում:

Բայց, շատ կարեւոր է, որ չմոռանանք 2 հոգեբանական ճշմար-

տութիւն: Առաջին՝ չկայ առողջ, բնական, նորմալ մարդ, որ չունենայ իր հոգեբանական բարոյց: Երկրորդ, ճիշդ չէ, որ հոգեբանական բարոյց չի, բոլոր պարագաներում եւ պայմաններում, վնասակար է:

Վնասակար է միայն, այն պարագային, երբ ուղեկցուած է արատաւոր, սխալ դաստիարակութեամբ, մանկական վաղ տարիքից: (Բարոյցի արագացումը եւ զարգացումը անխտիր, բոլոր մարդկային էակների մօտ, անխուսափելիօրէն սկսուում է մանուկի մօտ, շատ վաղ տարիքից):

Իսկ լաւ, նպատաւոր դաստիարակչական միջնորդութեամբ, նա կարող է հրաշալի մղիչ ոյժ, խթան լինել (motivation), մարդուն մղելու, լաւ գործեր, նոյնիսկ սիրագործութիւններ կատարելու: Ուսումնասիրուած եւ ապացուցուած է, որ հանձարները, մեծ արուեստագէտները, յայտնի յեղափոխականները, նշանաւոր առաջնորդները, նորարարները, ժողովրդական, անձնուէր հերոսները, այսպէս կամ այնպէս, որեւէ ձեւով, այսպէս ասած՝ «տառապել» են որեւէ բարոյցի:

Հետեւաբար, Ապրիլ 24-ն էլ (որ իմ կարծիքով), մեր համազգային, հաւաքական բարոյցն է ներկայացնում), կրկնում եմ, բարեյաջող եւ բարենպաստ դաստիարակչական պայմաններում, կարող է եւ պէտք է յոյժ դրական, նպատակասլաց դեր խաղայ, հայ անհատի կեանքում: Այլ կերպ, Արցախի մի բուռ հայութեան յաղթանակները, իրենց շատ աւելի մեծաքանակ թշնամու դէմ, անբացատրելի կը մնային:

Այսպիսով, թո՛ղ հայ ծնողը, ամենադոյզն մտահոգութիւնը չունենայ իր գաւակի «վարակումից» Ապրիլ 24ի բարոյցով: Դա, ո՛չ միայն լաւագոյն շիճուկն է (vaccin)է շարորակ հաւանական վարակումներից խուսափելու համար, այլ կարող է դառնալ, իր գաւակների գարմանահրաշ թուիչ քների սկզբնաղբիւր, ե՛ւ ուսման մէջ ե՛ւ կեանքի ուրիշ ոլորտներում, նայած՝ առկայ եւ առաջ եկող պայմաններին եւ հանգամանքներին: Ամէն ինչ կախուած է, անհատի ստացած դաստիարակութիւնից, շրջապատից, միջավայրից, կրած ազդեցութիւններից: Իսկ այն հարցին, թէ ե՞րբ կը հանգուցալուծուի (decomplexe) Ապրիլ 24ի բարոյցով, պատասխանն է՝ երբ ամբողջ աշխարհը կը ճանաչի (որ արդէն սկսուել է) 1915ի Յեղապանութիւնը եւ արդար ամբողջական հատուցում կը կատարուի հայ ժողովրդին: Հանգուցալուծման ժամանակակից, կենդանի օրինակն է հրեաների (այսպէս կոչուած) ցեղասպանութեան պարագան նացիների կողմից:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈՒՁԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**  
**(626) 398-0506**



### ՉԵՂԱԿՆ ԵՐԲԱԶԱՆ

Շարունակում է 6-էն

կանչեն Սրբազանի լորձնաշուրթն գոված Քոչարեանական իշխանութիւնները: Աշխարհի տարբեր կրօններու բարձրաստիճան եկեղեցականները երբեմն քաջութիւնը կ'ուսնենան իրենց քաղաքական իշխանութիւնները քննադատելու: Ինչպէս ըսինք, Չուլճեան Սրբազան ազատ է իր կարծիքները ունենալու, եւ սակայն ազատ չէ եկեղեցիին բեմէն Հայաստանի իշխանութեանց անտեղի գովասանքը ընելու: Այնքան մը որ քովս նստած մայրիկ մը նոյնիսկ բարձրաձայն իր բողոքը կ'արտասանէր Սրբազանի ելոյթին:

Հայրենիք եւ օրուայ իշխանութիւնները իրարմէ գանազանելու դժուարութիւնը ունի երիտասարդ այս եկեղեցականը: Իւրաքանչիւր սրտցաւ հայ Հայրենիքը կը սիրէ, մանաւանդ երբ այդ Հայրենիքի սիրոյն զո՛հ գացին Եղեռնի նահատակները: Այսքան սրբազանի քաղաքական յայտարարութեանց մասին: Կրնայինք այդ բոլորը ընդունիլ, եւ լուել: Ի վերջոյ ազատ է ինք:

Երկրորդ հարցն է որուն մասին մեր բողոքը եւ դժգոհութիւնը կը յայտնենք: Եթէ Չուլճեան Սրբազան խօսէր եւ քննադատէր Արեւմուտքն եւ Արեւելքն Հայաստանի մէջ մուտք գործած եւ աւեր գործող աղանդներու մասին, կրնայինք գինք սրտցաւօրէն հասկնալ: Եթէ մեր Հայրենիքի մէջ շուրջ 300

հազար հոգի դուրս կը մնան մեր առաքելական եկեղեցիէն, ասոր պատասխանատուութիւնը կ'երթայ երկու հասցէներու: ա. Երկրի Քոչարեանական իշխանութեանց, որոնք կրօնի ազատութեան լողունքի տակ, կ'արտօնեն այդ աղանդներու ազատ գործունէութիւնը, եւ էջմիածնի Կաթողիկոս Գարեգին Բ.ին, որ լուռ, կը համակերպի անոնց ներկայութեան, առանց բողոքի ձայն բարձրացնելու: Իսկ ինչ կը վերաբերի Հայ Աւետարանական համայնքի հասցէին ուղղուած լուրջ ամբաստանութեանց եւ քննադատութեան, Չուլճեան սրբազան, նախ կը մոռնայ որ ինք այցելու հիւր մըն է այս համայնքէն ներս, ուր խաղաղ կը գոյակցին բոլոր համայնքները, եւ պէտք չէ ինքնիրեն արտօնէ իր սեփական կարծիքները յայտնելու, մանաւանդ հայութենէն ներս գործող օգտակար համայնքի մը մասին, սխալ կարծիքներ յայտնելու, եւ ապա, իրեն չի մնար թելադրել որ Հայ Աւետարանական համայնքը իր անունէն վերցնէ «Հայ» անուանումը, եւ ինքզինք դաւանի «Բողոքական» միայն:

Չեղաւ, Սրբազան, աւելին պիտի ըսէինք որ անպատշաճ եւ անփափականկատ ելոյթ մըն էր այս, նոյնինքն Հայաստանի մէջ օգտակար նախաձեռնութիւններ ունեցող համայնքի մը հասցէին: Մեզի կը թուի թէ մեր արեւմտեան թեմի առաջնորդը աւելի ուշի-ուշով պէտք է հետեւի մեր գաղութը այցելող հիւր եկեղեցականներու արտայայտութեանց...

### »ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ«ՈՒ ՔԱՅԼԱՐՇԱԼԸ

Շարունակում է 7-էն

քաղաքակիրթ աշխարհէն»:  
Յարուստանեան եզրակացուց. «Մեր պահանջները յստակ են. - Արդարութիւն մեր մէկ ու կէս միլիոն անմեղ նահատակներուն: Հատուցում՝ թալանուած կալուածներուն համար եւ ազատագրուած բռնազրուած մեր պապենական հողերուն» (որոտընդոստ ծափահարութիւններ):

Քայլարշակին հիւրաբար ներկայ, թրքական կառավարութեան կողմէ հալածուած, բանտարկուած մարդկային իրաւանց պաշտպան, հրատարակիչ Ռակըբ Զարաբօյլու խօսք առնելով, «Բարեւ ձեզ, ձեր ցաւը՝ իմ ցաւն է», ըսաւ հայերէնով, իսկ իր օրոտընդոստ ծափեր ժողովուրդէն: «Դուք ձեր պայքարին մէջ մինակ չէք», - անգլերէնով շարունակեց Ռակըբ Զարաբօյլու, - «այսօր ձեզի հետ են մարդկային իրաւանց համար պայքարող բոլոր ազնիւ մարդիկ, ներառեալ իմ թուրք

հայրենակիցները: Որովհետեւ, ինչ որ ձեզի՝ հայերուդ պատահեցաւ, կրնայ պատահիլ աշխարհի որեւէ ուրիշ ժողովուրդներուն: Այնպէս որ, հայկական Յեղասպանութիւնը չընդունիլը, աշխարհի բոլոր քաղաքացիներուն համար վտանգ կը ներկայացնէ: Մենք պիտի չմոռնանք ձեզի պատահածը եւ պիտի չթողնենք որ կրկնուի նման բան աշխարհի մէջ որեւէ տեղ: Ուրացումը տեղ չի հասցներ եւ պիտի չհասցնէ թուրքիան: Թուրքիան քաղաքականապէս եւ բարոյապէս պարտաւոր է ճանչնալ եւ ընդունիլ Հայոց Եղեռնը: Շարունակեցէք հաւատալ ձեր պայքարի ճշմարտութեան եւ յաղթանակին: Ծնորհակալութիւն»:

Խօսք առին նաեւ ասմունքի վարպետ վարդիա Աբաջեան, Փրոֆ. Օշին Քէշիշեան, Արմէն Զատիկեան, Կլէնտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Ֆրանք Քինթերօ, - որ պահանջեց Սպիտակ Տունէն ճանչնալ Հայկական Յեղաս-

### ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ԾԱՄԲԱՆԵՐ...

Շարունակում է 14-էն

Խորենացուն, որի վկայութեամբ իր ազգը թէեւ ածու էր եղել, սակայն չի շատակութեան արժանի բազում բորձերով է փառաւորուած եղել: Աջ կողմին փոքրիկ հրապարակ է՝ ինքնաշարժերի կառուանտեղի: Մեր ինքնաշարժը փնջելով ու չորս յոգնաբեկ ոտքերը հպելով գետին կանգ առաւ: Այնտեղ էր կանգնել բազուկները կրծքին խաչած, իմաստուն հայեացքը թեքած Ստեփան Շահումեանը: Վկայում էին, որ իբր Գիւմրեցի քանդակագործ Մերկուրովն էր նրան արձանացրել, ինչու այդպէս, ինչու, նա մահն երբեք այդպէս չէր դիմագրաւի: Ոչ, նա Կոմունար էր եղել, հայ զինուորների մարտի էր առաջնորդել Պաբուների ու թուրք հորսակների դէմ, նրան պիտի արձանացրած լինէին մրդկահաւի խոյանքով:

Ես հպարտ եմ նաեւ ուրիշ ազգերին, գաղափարախօսութիւններին ծառայող հայ իմաստուններով, որոնք իրենց ցեղին ճանաչում են բերել, իրենց ուղղի շեփորներով, արուեստների ու գիտութեան ջանքերով իրենց ազգի լոյսն են վառել երկրներում բազում: Հանգամանքների բերումով է, որ իրենց իմաստութիւնն այնտեղ է ճառագել: Ինչքան ենք ջանում փնտռել, գտնել, նոյնիսկ այլ անունների ստուգանքներում թաքնուած հայ ազգի բազում հանճարներին, էլ ինչու ենք ըկնձուում որ ծովերի փոթորկայոց ալիքներին ջրերը պատաններին ցանած Այվազովսկի-Այվազեանին ուսունակարիչ են յորջորջում եւ ոչ թէ հայնկարիչ, որի վերջին ծովանկարը՝ Թրքական նաւի Խորտակումը», որտեղ պայթած կարմիր բոցերից թուրքերը ծով էին նետում:

Նայում Ստեփանին, այդ հանճարեղ հային՝ Կովկասի արտակարգ «Կոմիսար»ին: Սովետ Ռուսաստանի պետական ու կուսակցական ակադեմիայի գործիչին: Նա միեւնոյն ժամանակ հանդիսացել է մեծ ընկերաբան, փիլիսոփայ, տեսաբան, լրագրող: Խմբագրել է հայերէն ու ռուսերէն բազմաթիւ լրագրեր, նոյնիսկ իր դաւանած կուսակցութեան «Պրակտա» պաշտօնաթերթը:

պանութիւնը, - եւ «Պատուհան» հեռուստաժամի հաղորդավար Շահէ Քէօրօյլեան: Անոնք բարձր գնահատեցին Միացեալ Հայ Երիտասարդներու կազմակերպած այս տպաւորիչ քայլարշաւը, շեշտեցին միանականութեան ոգիով, նոր որակով, նոր տեսլականով գործելու անհրաժեշտութիւնը, որպէսզի

Ստեփանը, Միջին Ասիայի տափաստաններից եկած «Օղուզ» ցեղախմբի վայրենաբարոյ սելձուքների բռնակալած քաղաք՝ Պաբուում իրականացրել է կուսակցական ու քաղաքական ակնառու գործունէութիւն: Մոռացել են, թէ թաքնուած են իրենց ցեղի նուաստ ծագումը եւ հիմա իրենց կոչում են թուրք, Աղուան, Ազրպէյճանցի: Այժմ, թուրքիայի որոշ պատմաբաններ յայտարարում են որ «թուրք» ցեղ չի դել, այլ եղել են տարբեր ցեղախմբեր, որոնք խօսելն են «թուրքիկ» ընդհանուր լեզուով եւ այդպէս խօսող Միջին Ասիայի տարբեր ժողովուրդներ իրենց երբեք «թուրք» չեն անուանում: Աղաւաղելով, հնչիւնափոխելով Մեծն Աղեքսանդրի Յոյն գորավար՝ Ատրոպատսի անունը կրող երկրամասը, այն դարձրել են Ազրպէյճան եւ յաւակնում են տիրել նրա հիւսիս ու հարաւ մասերին: Այնտեղ է հին դարերու գոյատեւել պատմութեան թատերաբեմից հեռացած Մարաստան հզօր պետութիւնը, որի հետ հայոց Երուանդունիները երկար պատերազմներ են մղել եւ մի ճակատամարտում սպաննել նրան առասպելական Աժտահակ թագաւորին: Նրանք էին, որ կործանել էին Ուրարտու կոչուած պետութիւնը: Եւ մի նոր արշադնին լույս պիտի ծագի Մարերի, Աղուանների, Թալիշների, Լեզգիների սրտերին եւ աշխարհին պարզած իրենց ցեղերի դրօշները պիտի տիրեն իրենց նախնիների երկրներին: Լայն ժողովրդակաւութիւն է վայելել Պաբուում, որտեղ տիրել էին Հայերն ու Ռուսները, նախ թարգմանաբարութիւն ստեղծել, քաղաքը կառուցել: Գտնուեանցի յուշերով, այնտեղ թաթարները միայն սեւագործ աշխատանքով էին զբաղուել, հեռու չեղափոխական ու մշակութային գործունէութիւն ծաւալելուց: Ստեփանը ընտրուել էր Պաբուի Սովետի նախագահ: Պատմութեան հանդէպ չմեղանչելու համար, արժանի է վերջիլ, որ նա այդ պաշտօնին էր ընտրուել Սովետի դաշնակցական պատգամաւորների քուէների շնորհիւ, որոնք գիտակցել էին, որ լաւ է «Բոլշեւիկ» հայ նախագահ, քան իրենց կողմնակից օտար գործիչ:

յառաջիկայ հինգ, տասը տարիներուն ծրագրաւորուած աշխատանքներով հասնինք մեր արդար դատի իրականացման: Երգչուհի Անահիտ Ներսիսեանի «Կիլիկիա» երգով վերջ գտաւ Եղեռնի 91-րդ տարելիցին նուիրուած այս քայլարշաւն ու հաւաքը:

**«ՆՈՐ ՍԵՐՈՒՆՌ»**  
**ՇԵՆՈՒՍԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ**  
**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**  
**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**  
**(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԸ, ԼԱ ԶՐԵՄԵՆԹԱ)**  
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00**

**Armenian American Real Estate Association**  
**OPEN TO PUBLIC**  
 Candidate Forum for State Assembly 43<sup>rd</sup> District  
 Hon. Paul Krekorian - President, Burbank School Board (Democrat)  
 Michael Agbaba - Environmental Safety Consultant (Republican)  
 Steve Myers - Computer Engineer (Libertarian)  
 Please RSVP to association office at 818-542-6699  
 Monday, May 8, 2006 -- 6:30 - 8:30 P.M.  
 Glendale Pacific Community Center Auditorium  
 501 South Pacific Ave. Between Vine St. & Riverdale Dr.; Parking: On Riverdale & Kenilworth



### ԸՆԿԵՐ ԳՐԻԳՈՐ ԼԱԶԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շարունակում է շարունակել

լերանքն էր, որ ան կ'ընծայեր մեզի, խօսքով թէ գործով: Միութենական գանազան ձեռնարկներուն իր ներկայութեամբ, իր քաջալերական եւ յուսադրիչ խօսքերով, լաւատեսօրէն կը տրամադրէր մեզ, շարունակելու մեր աշխատանքները: Միշտ կ'ըսէր որ մեր գործունէութեամբ ինք աւելի կ'ոգեւորուէր եւ ուրախ ու հպարտ կը զգար: Իր այս ընթացքը մեզ կը պարտաւորեցնէր մնալ աշխույժ:

Ընկ. Գրիգոր Լազինեան իր աչքերը բացաւ աշխարհի մը մէջ, ուր Եղեռնը կը գործադրուէր ու հայութիւնը կը տեղահանուէր իր բնօրրանէն: Մանուկ հասակին ան ստիպուած եղաւ շուկաներու մէջ սանտր ծախելով իր ընտանիքի

օրապահիկին նպաստել: Ապրեցաւ 86 տարիներ եւ տեսաւ շատ, շատ մեծ փոփոխութիւն:

Ան իր աչքերը փակեց բոլորովին տարբեր աշխարհի մը մէջ, որ թէ շուկայացած է եւ թէ պատիկացած այնքան, որ մտած է իր մանուկ հասակի թոռներուն համակարգիչին (computer-ին) մէջ: Բայց մէկ բան մնացած է նոյնը, որ կը գերակշռէր ամէն ինչ: Մարդկային արժանիքները: Մանուկ հասակին շուկաներուն մէջ սանտր ծախող Գրիգորը եւ հասուն հասակին վաստակ ու դիրք շահած ընկ. Լազինեանը մնաց նոյնը: Պահեց Աստուծոյ իրեն տրուած արժանիքները:

Իր յիշատակը անմար կը մնայ զինք ճանչցողներու եւ սիրելիներու սրտերուն մէջ:

### ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՄՐՏԻ ԽՕՍՔԸ

Շարունակում է շարունակել

անկարելի էր նաեւ անտարբեր եւ լուր մնալ այս ցաւալի պատահարին նկատմամբ:

Ուստի իմ զգացումներուն վրայ քար դնելով, կը փութամ որպէս ընկերական անյետաձգելի պարտաւորութիւն, իմ սրտի եւ յարգանքի խօսքը ըսել, ալ յաւերժ յուշ դարձող ընկերոջ յիշատակին: Այո, ան պիտի չլսէ իմ խօսքերը, սակայն այդ երբեք ալ զարմանալի չէ: Քանի որ ան հարազատ հետեւորդներէն էր, անշահախնդիր ու գոհորովեան մարմնացումի ռահվիրայ ընկ. Մինաս Խաչիկեանի սերունդին, որոնց համար ամէն բանէ առաջ եւ կարեւորը միութեան ծառայել եւ օգտակար ըլլալն էր, եւ ոչ թէ գովասանք եւ փառք ակնկալելը, եւ կամ այդ մասին խօսք լսելը:

Այսօր անհուն գոհունակութեամբ կը յիշեմ, երբ անցնող ամիսներուն Նոր Սերունդի հեռատեսիլի կայանէն, կարելի եղաւ թէկուզ ոչ ամբողջական ներկայացնել ընկ. Գ. Լազինեանի միութենական կեանքը, ուր յատկապէս ինք, շատ համեստ եւ պարզօրէն խօսեցաւ իր անցեալի՝ մարզիկի եւ միջազգային իրաւարարի գործունէութեան մասին: Անշուշտ այդ ժապաւէնը իր բովանդակութեամբ կը մնայ մշտապէս եւ յիշատակելի: Ընկ. Գրիգոր առաջին իսկ օրէն եղած է պարկեշտ եւ անխոնջ Հ.Մ.Մ.ական մարզիկ: Ան կը պատկանի այն երանելի սերունդին, որոնք մասնակիցը եւ կերտողները եղան Հ.Մ.Մ.ի ֆութպոլի խումբին, նոյն տարեշրջանին դառնալու համար Լիբանանի ախոյեան եւ բաժակակիր:

Տարիներ չեսոյ հանգստեան կոչուած մարզիկը չհեռացաւ դաշտէն: Ան եղաւ Լիբանանի առաջին միջազգային իրաւարարներէն, միշտ մնաց գնահատուած որպէս անաչառ դատաւոր, եւ այդ պատճառաւ իրեն վստահեցաւ իրաւարարներու յանձնախումբին ատենապետութիւնը:

Այդ բոլոր աշխատանքներու կողքին ան երկար տարիներ եղաւ Հ.Մ.Մ.ի տեղական վարչութեան ժրջան անդամ: Մնալով միշտ պատնէշի վրայ, մանաւանդ երկրին տագնապալից օրերուն:

Պայմաններու բերումով երբ ան ընտանեօք հաստատուեցաւ Լոս Անճելոս՝ Փասադենայի շրջանը, կրկին երիտասարդական կորովով, իր երեք զաւակներով միասին միշտ քաջալերեց եւ ներկայ եղաւ Հ.Մ.Մ.եան տարբեր ձեռնարկներու:

Շրջանէն ներս, երբ առիթը ներկայացաւ, ան առաջիններէն եղաւ որպէս պարտաճանաչ անդամ եւ ըստ իր նշանաբանին, կրկին նուիրեալ ոգիով եւ ուրախութեամբ ծառայելու իր պաշտած Հ.Մ.Մ.ին, որպէս վեթեւաններու համախմբումի վարչական:

Այս պահուն կարելի չէ, բայց վստահաբար կու գայ օրը երբ համապարփակ կը խօսուի եւ կը գրուի, հաւատաւոր Հ.Մ.Մ.ական ընկերոջ բազմամեայ գործունէութեան մասին որ միշտ կը մնայ գովելի եւ օրինակելի:

Որպէս հաւատաւոր շարքային, ողբ. ընկ. Գ. Լազինեան անխոնջ նուիրումով ծառայեց իր մութեանը եւ դժբախտաբար այսօր կեանքէն կը հեռանայ: Բայց եւ այնպէս, ան միշտ պիտի յիշուի որպէս անբասիր եւ տիպար Հ.Մ.Մ.ական:

Յաւերժ յարգանք իր անմոռաց յիշատակին:


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State:----- Zip Code:-----  
 Country: -----  
 Tel :----- Fax : -----



Photographer - Jacob Demirdjian  
 Running WOLF Photography ©  
 POWER OF THE CAMERA ©  
 YOUR ONE STOP INTERNATIONAL ART DEALER ©  
 TEL: (828) 795-4490 FAX: (828) 555-8404




**HARUT DER-TAVITIAN**  
 License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202  
 Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233  
 Fax: 818/502-3244  
 Pgr.: 818/608-9898  
 info@excelhye.com  
 www.excelhye.com

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL



ՄԱՍԻՍ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱԼԱԿ ԹՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԵԻԸ ԼԵՌԱՆ ԵՏԻՆ**

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ  
 ԱՆՍՊԵՆ ԵՒ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԼՈՅՍ ՏԵՍԱԻ**  
 Սահակ Թուրքեանի  
 «ԱՐԵԻԸ ԼԵՌԱՆ ԵՏԻՆ»  
 Հայրենական Օրագիրը

Ստանալու համար  
 դիմել հեղինակին՝  
 Հեռ. (818) 563-6174

կամ հետեւեալ  
 գրախանութները  
 Կլէմտէյի մէջ  
 Ապրիլ՝ (818) 213-4112  
 Պերմ՝ (818) 244-3830  
 Սարդարապատ՝  
 (818) 500-0790



### ՇՈՒՆՆԵՐԻՆ



ՍԻԼՎԱ (ԵՐԵՒԱՆԵԱՆ) ՊՁՏԻԿԵԱՆ  
(Ծնեալ 1956ին, Պէյրութ, Լիբանան)

Ողբացեալ ՍԻԼՎԱ (ԵՐԵՒԱՆԵԱՆ) ՊՁՏԻԿԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, կիրակի, 7 Մայիս 2006, քնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուին ներկայ գտնուիլ:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Գրիգոր Պատիկեան
- Զաւակները՝ Տօքթ. Վաչէ Պզիկեան
- Ռաֆֆի Պատիկեան

Հայրը՝ Իսահակ Երեւանեան  
Եղբայրը՝ Տօքթ. Պողոս եւ Օտիլ Երեւանեան եւ զաւակները՝ Արմէն, Ալէքս եւ Ալին

Քոյրը՝ Սաթօ եւ Գէորգ Գարածրճեան եւ զաւակները՝ Արա եւ Աբօ Տազրը՝ Վարդան եւ Ալին Պատիկեան եւ զաւակները (Լիբանան) Տալը՝ Վերա եւ Բենօ Եարտրմեան եւ զաւակները (Գանատա) Տազրը՝ Զարհե եւ Քարլա Պատիկեան եւ զաւակները (Լիբանան) Քրոջ դուստրը՝ Մարալ եւ Վիգէն Գրածեան եւ զաւակը Մօրաքոյրը՝ Սիրուհի Պուլղուրճեան եւ զաւակները Մօրեղբայրը՝ Վարդան Եղկաթեան  
Մօրեղբօր կինը՝ Միմի Եղկաթեան եւ զաւակները (Լիբանան) եւ համայն Պատիկեան, Երեւանեան, Գարածրճեան, Եղկաթեան, Կիրիկեան, Խաչատուրեան, Պուլղուրճեան, Եարտրմեան, Գասարճեան, Բարսեղեան, Փիլոյեան, Մկրեան, Գրածեան, Առաքելեան, Խարբուլճեան, Քիւրքճեան, Շամլեան, Աբէլեան, Հաճճար, Կոստանեան, Փանոսեան, Ապաճեան եւ Արզումանեան ընտանիքներն ու հարազատները:

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԼՈՒՍՆԹԱԳ ԹԱՄԻՆՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի՝ Նոր Սերունդ Մշակութային Միութեան կատարուած նուիրատուութեանց համար, հանգուցեալի ընտանիքն ու հարազատները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլորին:

Նաժիպ Մալուֆի եւ Ռիթա Ուսուն	\$200
Պողոս եւ Սիւզան Քիրազեան	\$200
Արմինէ Պողոսեան Թոմսըն	\$100
Զարմինէ Նազգաշեան	\$100
Մատլէն եւ Ճէք Ստեփանեան	\$100
Ճորճ եւ Շաքէ Տէմիրճեան	\$100
Երուանդ եւ Լինտա Ալվազեան	\$100
Վարդուհի Ալեփաօղլեան	\$100
Ստեփան Ազատեան	\$100
Մանուկ եւ Սելլա Նազիրեան	\$75
Կարապետ եւ Արփինէ Դանիէլեան	\$50
Պերճ եւ Հնազանդ Մանաշեան	\$50
Էլըն Մէլիթըն	\$50
Ճէք Մէնաշեան	\$50
Երուանդ Մաքսուտեան	\$50
Մանուկ եւ Անահիտ Պէնզաղեան	\$50
Ներսէս եւ Վերժին Մանուկեան	\$50
Գայանէ Տէմիրճեան	\$50
Մատլէն Ռոզպըրի	\$50
Զոհրապ եւ Սեդա Միսիթարեան	\$50
Աւետիս Մանուկեան	\$50
Յարութ եւ Մարալ Ճապրայեան	\$40
Քրիսթին Խաչատուրեան	\$40
Պապի Տայմընտ	\$25
Ֆիլիփ Հաֆ	\$25
Նուէր Մարգարեան	\$25
Սամուէլ եւ Մարիա Ակիւլեան	\$25
Պարգեւ եւ Վեհանուշ Պիւպիլեան	\$25
Յարութիւն եւ Անահիտ Տէր Սարգիսեան	\$25
Մի ոմն	\$20

### ՄՐՏԻ ԽՕՍՔ ՍԻԼՎԱՅԻՆ

#### ԳԵՈՐԳ ԵՒ ՍԱԹՕ ԳԱՐԱՃՐՃԵԱՆ

Պէյրութ, 1956 Օգոստոս 1 թուականին, առաւօտեան ժամերուն աշխարհ ժամանեցիր, որպէս Երեւանեան գերդաստանի երկրորդ սերունդին կրտսեր շառաւիղը:

Հրեշտակային անուշ դիմագիծով, մետաքսեայ շրթներով ու սիրուն աչքերով դիւթիչ նայուածքով ուրախութեամբ եւ հրճուանքով լեցուցիր ծնողքիդ՝ Իսահակ եւ Մաքրուհի Երեւանեաններու, քրոջ՝ Սաթոյին, եղբօր՝ Պողոսին, զարմիկներուդ, մօրաքոյրերուդ, հօրաքրոջը եւ բոլոր հարազատներուդ սրտերը որպէս նորածին իշխանուհի: Յնձութեան եւ վայելքի ապրումով ճոխացուցիր շրջակայքդ, ուր ձեռքէ ձեռք կը խլէին քեզ աղամանդեայ գնդակի մը նման:

Հասակ առիւր պապեանական մթնոլորտի մէջ, հայրով, մայրով, մեծ մայրերով, քոյրով, եղբայրով, ինչպէս նաեւ քեզ սիրող զարմիկներով:

Եղար պատուաբեր եւ տիպար դպրոցական ուսանողուհի: Ժրաջան ուշիմ եւ ուսումնասէն: Սիրեցիր գիր գրականութիւն, երաժշտութիւն եւ արուեստ: Կիթառը ձեռքիդ երգեցիր քաղցր ձայնով դիւթիչ եղանակներ:

Ծնողքիդ, քրոջը եւ եղբօրդ հսկողութեամբ դարձար ազնիւ երիտասարդուհի պատիւ բերելով շրջապատիդ եւ ընտանիքիդ:

Պարթեւ հասակով, երկար մազերով եւ վայելուչ կերպարանքով եղար հիացմունքի աղբիւր բարեկամներուդ եւ շրջապատիդ:

Պարզ էիր բայց եւ այնպէս աշխուժութեամբ եւ եռանդով տոգորուած, կատակասէր եւ մարդասէր, գիտէիր ազնուօրէն յարաբերիլ մարդոց հետ միշտ յարգանքով բերեղացած: Քեզ սիրեցին եւ հաւնեցան բոլորը՝ անխափ: Ունէիր հմայք եւ շողարձակում:

Հազիւ նորահաս պարմանուհի՝ դարձար սիրող մօրաքոյր Արային, Մարալին եւ Աբոյին եւ յետագային հօրաքոյր՝ Արմէնին, Ալէքսին եւ Ալինին: Անոնք վայելեցին քու հոգեկան եւ հոգատար ջերմութիւնդ որ մինչեւ այսօր վառ կը մնայ:

Հազիւ տասնըութ տարեկան էիր, գրաւեցիր Գոգոյին սիրտը որ քեզի կապուեցաւ անշէջ սիրով: Ամուսինիդ նեցուկ կանգնեցար բոլոր մարզերէն ներս: Քու ճառագայթներէն տուիր նաեւ Պատիկեան

ընտանիքին երկու պատուական զաւակներով, յանձինս Տօքթ. Վաչէին եւ Ռաֆֆիին ճոխացնելով քու եւ Գոգոյին կեանքը: Զանոնք ինամեցիր որպէս գուրգուրացող մայր, ծառայեցիր իրենց պէտքերուն եւ տուիր քու կեանքիդ աւիշէն: Անընդհատ հետեւեցար անոնց բարօրութեան եւ ուսման:

Հազիւ նոր հարս՝ հաստատուեցար Գաթար ու հմայքովդ շուրջդ հաւաքեցիր Գաթարի գաղութը եւ արժանացար անոնց գնահատանքին եւ հիացմունքին:

Միշտ եղար լաւատես, գուարթ եւ ուրախացուցիր բոլորը: Կազմակերպեցիր հաւաքոյթներ՝ նիւթապէս եւ բարոյապէս օգնելու Լիբանանի մէջ տառապող հայ համայնքին՝ սատար հանդիսանալով կրթական օժանդներուն:

Երբ ընտանիքով հաստատուեցար Լոս Անճելոս աւելի ընդարձակեցիր բարեգործ արարքներուդ շրջագիծը: Ամուսինիդ՝ Գրիգորին յարատեւ օգնութեամբ կատարելագործեցիր բարձրագոյն ուսմանդ ընթացքը որ ընդհատուած էր փոքր տարիքիդ ամուսնանալու պատճառաւ: UCLA համալսարանը աւարտեցիր բարձրագոյն գնահատանքով: Ապա հիմնեցիր արուեստի հիմնարկդ SB Fine Arts եւ տարածեցիր հայ արուեստը հայ թէ օտար հանրութեանց:

Չմոռցար ժողովուրդիդ նուազ բախտաւոր զաւակները եւ մասնակցեցար ու հովանաւորեցիր հանգանակներուդ որպէսզի չքաւոր սաներ ուսում ստանան եւ կերտեն իրենց ապագան:

Վարձքդ կատար անուշիկ Սիլվա: Այժմ հարց կու տամ քեզի. ինչո՞ւ եւ ինչո՞ւ աճապարեցիր այսքան շուտ քու մատղաշ տարիքիդ երբ բոլոր կարելիութիւններն ու միջոցը ունէիր հանգիստ եւ ճոխ կեանք մը ապրելու եւ առյաւէտ կը հեռանաս մեզ անմխիթար ձգելով: Հարազատներդ եւ բոլոր ներկայ ու հեռաւոր սակիւրներդ այլապէս նոյն հարցումն է գոր կը յղեն, բայց պատասխանը չեն գտներ:

Երբ մտածենք պահ մը եւ լիչենք այդ իմաստուն խօսքը որ կ'ըսէ.

Խորհուրդ մարդկանց, կամքն Աստուծոյ:

Դուն հիմա միացած ես սուրբերու եւ երկնաւոր հրեշտակներու փաղանքին եւ մեր վրայ կը հսկես:

Թող հոգիդ ապրի երկնային խաղաղութեան մէջ:

### Dr. Alfred Danielian English-Armenian Comprehensive Medical Dictionary

Դոկտ. Ալֆրէտ Դանիէլեան  
Անգլերէն-Հայերէն Բժշկական Բացատրական  
Առձեռն բառարան

Մամուլի տակ է եւ շուտով տպարան «Երեւան»էն լոյս կը տեսնէ լոյս կը տեսնէ Դոկտ. Ալֆրէտ Դանիէլեանի երկրորդ՝ «Անգլերէն-Հայերէն Բժշկական Բացատրական Առձեռն բառարանը» որ կը բաղկանայ 500 էջերէ եւ 8,500 բառերէ:

Բժշկական եւ առողջապահական գիտական ամենավերջին ու այժմէական բառերն ու բացատրութիւնները պարունակող 4,5x7 տպաչափի առձեռն այս բառարանը, եճր եւ ձեր ընտանիքին մնայուն ընկերը դառնալու սահմանուած է:

Դոկտ. Դանիէլեան, տարիներու քրտնաջան աշխատանքի արդիւնք իր այս երկրորդ բառարանով ճիշդ չէ ինչպէս, յատկապէս ոչ փրոֆեսիոնալ ժողովրդային խաւերուն մատուցելու գիտական աշխատութիւն մը, որ իր գործնական, պարզ ու դիւրահասկնալի լեզուով դիւրամատչելի է բոլորին:

Բառարանը շուտով կրնաք գտնել շրջանիս հայ գրավաւաճներուն մօտ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.*



Հ.Բ.Ը. Միութեան Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային  
Յանձնաժողովը կը յայտարարէ հարիւրամեակի Կալա-  
ճաշկերոյթ, տօնելու համար Հայկական Բարեգործական  
Ընդհանուր Միութեան պանծալի տարեդարձը:

# ՀԲԸՍ ԸԱՐԻԻՐԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ- ՃԱՇԿԵՐՈՅԹ

## ՆԱԽԱԳԱՅՐՈՒԹԵԱՄԲ՝ ՌԻՉԸՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԲԱՆԱԽՕՍ՝ ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆ

ՆԱԽԱԳԱՅ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍԱԿԱՐՆԵՐ՝

**ԷՐԻՔ ԿԱՐՍԵԹԹԻ**

**ԹՈՐՈՍ ԵԹԵՆԵՔԵԱՆ**

ՆԱԽԱԳԱՅ ԼՈՍ ԱՆՃԵԼՕՍԻ ԲԱՐԱՔՅԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Հ.Բ.Ը. ՀԱՐԱՄԱՅԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՅՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

# ՅՈՒՆԻՍ 17, 2006

Universal Hilton Hotel Պանդոկին մէջ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել ՀԲԸՍ-ի գրասենեակը՝  
(626) 794-7942 կամ գրել՝ [annette@agbuca.org](mailto:annette@agbuca.org)

ԿԻՊՐՈՒՄ 100 Կ-ՊՇԵՂ